# Ազգ

Azg

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 147(5230)

ISSN: 1829-1651


# Սիրիային հարվածելու բանաձեւ Սենատի կոմիտեում. 60+30 օր

## *Ջոն Մակքեյնը լսումների ժամանակ պոկեր էր խաղում*

**Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեում անցկացվել են լսումներ Սիրիային հարվածելու բանաձեւի առնչությամբ: Բանաձեւի նախագիծն առաջարկում է Սիրիայի դեմ ռազմական գործողությունը սահմանափակել երկու ամսով, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Նախագծի հեղինակներն են կոմիտեի ղեկավար, դեմոկրատ Ռոբերտ Մենենդեսը եւ հանրապետական սենատոր Բոբ Կորկերը: Փաստաթուղթը ենթադրում է անհրաժեշտության դեպքում գործողությունը 1 ամսով երկարաձգելու հնարավորություն: Բացի դրանից, կոմիտեն առաջարկել է արգելել Սիրիայում ցամաքային գործողության ձեռնարկումը:**

**Ավելի վաղ Կոնգրեսի ստորին պալատի նախագահ, հանրապետական Ջոն Բեյները հավանություն էր տվել Սիրիային հարվածելու նախագահ Բարաք Օբամայի բանաձեւին: Գրեթե միաժամանակ նույն պալատում դեմոկրատների առաջնորդ Նենսի Փելոսին հայտարարել էր, որ ինքը եւս հավանություն է տալիս բանաձեւին:**

**Ներկայացուցիչների պալատում ներկայումս մեծամասնություն են կազմում հանրապետականները, մինչդեռ Սենատում կեսից ավելին դեմոկրատներ են:**

**«Վաշինգտոն փոստ» թերթը հաղորդում է մի զավեշտական միջադեպի մասին: Մինչ Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեում լսումներ էին անցկացվում հակասիրիական բանաձեւի առնչությամբ, ԱՄՆ նախագահության նախկին թեկնածու, Արիզոնան ներկայացնող հանրապետական սենատոր Ջոն Մակքեյնը զբաղված էր պոկեր խաղալով:**

**Ինքը՝ Մակքեյնը, ընդունել է տվյալ փաստը եւ իր անձնական կայքէջում գրել է. «Սկանդալ: Բռնվեցի, երբ iPhone-ով պոկեր էի խաղում Սենատում ավելի քան 3 ժամ տեւած նիստի ժամանակ: Ամենավատն այն է, որ պարտվեցի»:**

**Մակքեյնը հանդես է գալիս հակասիրիական լիամասշտաբ պատերազմի օգտին, որը կհանգեցնի Բաշար Ասադի վարչակարգի տապալմանը: Սեպտեմբերի 3-ին նախագահ Օբամայի հետ հանդիպումից հետո նա հայտարարեց, որ եթե Կոնգրեսը մերժի Սիրիային հարվածելու Օբամայի նախաձեռնությունը, ապա դա «կսասանի ոչ միայն ներկայիս վարչակազմի, այլեւ հետագա նախագահների հեղինակությունը, կհանգեցնի աղետալի հետեւանքների»:**

**ԱՄՆ-ում անցկացված վերջին հարցումները վկայում են, որ բնակչության կեսից ավելին դեմ է հակասիրիական ռազմական գործողությանը: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ սեպտեմբերի 3-ի հարցման տվյալներով, ամերիկացիների 56 տոկոսը դեմ է միջամտությանը, 19 տոկոսը կողմ է: Հարցման մասնակիցների 25 տոկոսը դժվարանում է պատասխանել:**

Պ. Ք.



# Եվրոպան՝ բացատրության սպասելով...

## *Հետո՞ ինչ, թե հասկանալի են Հայաստանի մտահոգությունները ղարաբաղյան հարցի, անվտանգության առումներով*

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Մաքսային միությանը միանալու Հայաստանի «որոշման» մասին անակնկալ տեղեկացան ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս: Որքան էլ այդպիսի հայտարարությունը սպասելի ու անգամ կանխատեսելի կարող էր լինել, ակնհայտ է, որ դրան որեւէ պարագայում չէին սպասում, այն էլ այնպիսի մի ձեւակերպմամբ, ինչպիսին ներկայացվեց այն դեպքում, երբ, ասենք, Ուկրաինայի պարագայում խոսվում է դիտորդի կարգավիճակի մասին:

Սարգսյանի հայտարարության հայտնի դառնալուց հետո Բրյուսելից պաշտոնապես արձագանքը ուշանում էր, թեեւ հարկ է նշել, որ սեպտեմբերի 3-ին Հայաստանի նախագահի արած հայտարարությանը արդեն իսկ նախորդել էր Ռուսաստանի կողմից ճնշումների վերաբերյալ մեկ ընդհանրական հայտարարություն, որը, սակայն, այդ պահի դրությամբ, չէր վերաբերում Հայաստանին:

Խոսքը սկանդինավյան եւ բալթյան երկրների արտգործնախարարների համատեղ հայտարարության է վերաբերում, որ արվել էր սեպտեմբերի 2-ին շվեդական Վիսբյու քաղաքում կայացած նիստի ավարտին: Հայտարարությամբ նշվում էր, թե անընդունելի են Արեւելյան գործընկերության երկրների վրա գործադրվող ճնշումները, մասնավորապես Ուկրաինայի օրինակով, որը ոչ թե նախաստորագրելու, այլ արդեն ստորագրելու է պատրաստվում Ասոցիացման համաձայնագիրը նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովում:

Այս հայտարարությունը փաստացի նախորդել էր Սարգսյանի հայտարարությանը, մինչդեռ Մաքսային միությանը միանալու մասին խոսքերին հաջորդած առաջին արձագանքը Բրյուսելից ԵՄ նախագահող երկրի՝ Լիտվայի արտգործնախարար **Լինաս Լինկեվիչյուսի** հայտարարությունն էր, որ առանձնակի չէր տարբերվում մինչ այդ Եվրոպայից Հայաստանին ուղղված համանման հայտարարություններից այն տարբերությամբ, որ տեղի ունեցածով «Հայաստանը արգելափակեց իր հնարավորությունները ստորագրելու խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման համաձայնագիրը»:

*Տես էջ 2*

# Խոսքը «տասը ռուբլիով» Սոչի հանգստանալու գնալու մասին չէ

## *Ինչպես «Մոլեսի ժամանա՞կ»*

Հայաստանում այսօր քիչ մարդիկ են մնացել, հիմնականում ազգայնական մանր կուսակցություններում, որոնց կարծիքով Հայաստանը ժամանակի հետ աստիճանաբար փոքրացող աշխարհում կարող է իր անկախ, ամուր, զարգացող ու անվտանգ պետությունը պահպանել՝ առանց որեւէ աշխարհաքաղաքական համակարգի մեջ մտնելու:

Հիմնականում բոլորս էլ հասկանում ենք, որ վաղ թե ուշ, Հայաստանը պետք է մաս կազմի որեւէ նման միավորման, եւ խնդիրն այն էր, թե կոնկրետ որի՞: Ինչպես գիտենք, եւ երեկվա համարում էլ ներկայացրել ենք, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի խոսքերով՝ «Հայաստանը որոշում ունի» Մաքսային միությանը միանալու վերաբերյալ, եթե սա այսպես է, հետեւաբար «Հայաստանը նաեւ որոշում ուներ ԵՄ-ի հետ ազատ, խոր, համապարփակ առեւտրի համաձայնագիր չստորագրելու վերաբերյալ», քանի որ համաձայն ԵՄ-ի պաշտոնական դիրքորոշման՝ հնարավոր չէ նման համաձայնագիր ստորագրել մի երկրի հետ, որը չունի, դիցուք, ինքնուրույն մաքսային օրենսդրություն:

*Տես էջ 5*

# Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց ՀԲԸՄ նախագահին

**Սեպտեմբերի 4-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց ազգային-եկեղեցական զանազան հարցերի:**

**Զրույցի ընթացքում Ամենայն հայոց կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը կարեւորեցին աշխարհասփյուռ հայության եւ ազգային կառույցների ու հաստատությունների շարունակական աջակցությունը սիրիահայությանը Սիրիայում տիրող դժվարին այս շրջանում:**

**Ուրախությամբ ընդունելով առաջիկա սեպտեմբերի 24-27-ը Մայր աթոռում գումարվելիք Հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի մասին տեղեկությունը՝ ՀԲԸՄ նախագահն իր մաղթանքները բերեց ժողովի աշխատանքներին՝ ընդգծելով եպիսկոպոսաց ժողովի կարեւոր առաքելությունը համայն հայության կյանքում:**

**Հանդիպմանը մասնավոր անդրադարձ կատարվեց Մայր աթոռ Ս. Էջմիածնի գործունեությանը, կրթական, սոցիալական եւ եկեղեցաշինական ծրագրերին: Այս առիթով Վեհափառ հայրապետն իր գնահատանքը հայտնեց ինչպես անձնապես տիար Պերճ Սեդրակյանին՝ որպես Մայր աթոռի բարերարի, այնպես եւ ՀԲԸՄ բոլոր անդամներին՝ Ս. Էջմիածնի հանդեպ իրենց ուշադրության եւ նվիրումի համար:**

**Իր հերթին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանն իր հավատարմությունը հայտնեց Մայր աթոռ Ս. Էջմիածնին եւ վստահեցրեց Ամենայն հայոց կաթողիկոսին, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը շարունակելու է ըստ ամենայնի զորակցել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու գործունեությանը եւ Մայր աթոռի ազգանպաստ ծրագրերին:**

# «Մոսկվա» հածանավը շարժվում է դեպի Արեւելյան Միջերկրածով

Սեւծովյան նավատորմի «Մոսկվա» հածանավը, որին ՆԱՏՕ-ն «ավիակիրների սարսափ» է անվանում, Կաբո-Վերդեի Մինդելու նավահանգիստ մտնելու փոխարեն սկսել է շարժվել դեպի Արեւելյան Միջերկրածով: Այդ մասին սեպտեմբերի 4-ին Ինտերֆաքս գործակալությանը հայտնել է Ռուսաստանի ռազմադիվանագիտական աղբյուրներից մեկը:



«Հարկ եղավ փոքր-ինչ փոփոխել ծովուժի ջոկատի ծրագրերը: Կաբո-Վերդեի փոխարեն «Մոսկվա» հածանավը շարժվում է Ջիբրալթարի նեղուցի կողմը: Մոտավորապես տասն օրից նավը մուտք կգործի Արեւելյան Միջերկրածով, որտեղ խաղաղօվկիանոսյան «Ադմիրալ Պանտելեեւ» հակասուզանավային մեծ ռազմանավից կընդունի ծովուժի օպերատիվ զորամիավորման առաջատարի հերթափոխը», ասել է աղբյուրը:

«Մոսկվա» հածանավը Սեւաստոպոլից դուրս է եկել հուլիսի 2-ին: Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում հածանավը սկսեց գլխավորել Սեւծովյան, Հյուսիսային եւ Բալթյան նավատորմերի նավերի ու ռազմանավերի ջոկատը: Օգոստոսի սկզբներին հածանավը մտավ Կուբա՝ Հավանայի նավահանգիստ, օգոստոսի 13-ին՝ Նիկարագուայի Կորինտո նավահանգիստ, անցում կատարելով Պանամայի ջրանցքով:

Օգոստոսի 27-ին ծովուժի ջոկատը այցելեց Վենեսուելայի Լա-Գուայրե նավահանգիստ, Ատլանտյան օվկիանոսում հրաձգություն կատարեց Կ-1030 «Վուլկան» գլխավոր հարվածային համալիրից:

Պ. Ք.

# Ո՛չ Մաքսային միությանը

## *Բողոքի ակցիա նախագահական նստավայրի դիմաց. կան ձերբակալվածներ*

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մոսկովյան հանդիպման հայտարարությունը, որ Հայաստանը ցանկանում է անդամակցել Մաքսային միությանը, Երեւանում միանշանակ չընդունվեց: Նախ՝ քննարկումներ ու քննադատական կարծիքներ համացանցում, հետո՝ բողոքի ակցիաներ: «Back to USSR», «Մենք չենք ուզում ռուսահպատակ լինել», «Նասաշաներ, պուծինկաներ» ու նմանատիպ պաստառներով երեկ շուրջ 150 քաղաքացի նախագահի նստավայրի դիմաց էին: Նրանց խոսքերով, սա ընդամենը զգուշացում է, այս կերպ նրանք տեղեկացնում են նախագահ Սարգսյանին, որ այլեւս չփորձի առանց հասարակության հետ խորհրդակցելու եւ նրա կարծիքը հարցնելու որոշումներ կայացնել երկրի վերաբերյալ: «Եթե նախագահական նստավայրից հաջորդ անգամ խոսեն Մաքսային միության կամ նրա անդամակցության մասին, ապա բողոքի ակցիաները կլինեն ավելի հզոր ու ավելի մարդաշատ: Մեզ չեն կարող պարտադրել կրկին վերադառնալ ԽՍՀՄ», ասում էին ակտիվիստները՝ հավելելով, որ Հայաստանի նախագահը չորս տարի շարունակ հայտարարել է, որ պետությունն ամեն ինչ անում է Ասոցիացման համաձայնագիր ստորագրելու համար եւ վերջին պահին, առանց որեւէ հայտարարության եւ զգուշացման, Սարգսյանը մեկնում է Մոսկվա եւ ներկայացնում Հայաստանի եւ Հայաստանի քաղաքացիների դիրքորոշումը: «Նման դիրքորոշում չկա, նախագահից սկսած մինչեւ արտգործնախարար եւ ՀՀԿ վերջին կուսակցականն ասում էին, որ շուտով պայմանագիր ենք կնքում, ու Հայաստանի համար նոր հորիզոններ են բացվում: Բա էդ ժամանակ ինչի՞ նախագահը այլ դիրքորոշում չէր ներկայացնում: Ի՞նչ եղավ, Կրեմլում շա՞տ նեղեցին, ասացին՝ սիրուն չէ՞, ասացին՝ լեգիտիմ չե՞ս ու ինչ ասենք, էդպես պետք է լինի՞: Չի լինելու նման բան, Հայաստանը նորից ԽՍՀՄ չի դառնալու», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց Կարեն Հովհաննիսյանը՝ հավելելով, որ եթե անգամ նախագահի վրա ճնշումներ են գործադրվել, ապա նախագահը պետք է լսեր իր քաղաքացիների կարծիքը: «Նախագահը չի կարող 3 միլիոն հոգու փոխարեն որոշում կայացնել, թող անցկացնեն հանրաքվե, եւ հասարակությունը հայտարարի՝ ուզում է միանալ Մաքսային միությա՞նը, թե՞ Եվրոպական», ասաց մեկ այլ ակտիվիստ՝ Կարինեն:




Ակտիվիստներից ոմանք ի նշան սարկազմի գնել էին CCCR պաղպաղակներ եւ կարմիր վզկապներ, նրանք երգում էին ԽՍՀՄ հիմնը եւ հավելում, որ Հայաստանը չի վաճառվում Ռուսաստանին:

Ակցիայի մասնակիցները պահանջում էին նաեւ նախագահի հրաժարականը՝ վանկարկելով՝ «հե-ռա-ցեք»: Որոշ ժամանակ անց ակտիվիստներն անցան դիմացի մայթ, սակայն ոստիկանները սկսեցին քաշքշել նրանց եւ մի քանի հոգու բերման ենթարկեցին: Յոթ ակտիվիստ դեռ պահվում է Արաբկիրի ոստիկանությունում:

Բողոքի ակցիան, որ սկսել էր ցերեկը ժամը մեկին, ավարտվեց ժամը 4-ի սահմաններում: Ակտիվիստները հայտարարեցին, որ սա վերջին ակցիան չէ, նման եւ ավելի մարդաշատ ակցիաներ լինելու են, եւ իրենք ապացուցելու են, որ երկրի տերը ՀՀ քաղաքացին է:

Հ. Հ.

# Եվրոպան՝ բացատրության սպասելով..

*1-ին էջից*

Լիտվայի արտաքին գերատեսչության ղեկավարը մասնավորապես նաեւ նշել էր, թե Եվրոմիությունը հարգում է Հայաստանի նախագահի որոշումը, սակայն ընդգծում, որ տարբեր տարիֆներ ունեցող երկու կազմակերպություններին անդամակցությունը հնարավոր չէ:

Շվեդիայի արտգործնախարար **Կառլ Բիլդն** էլ թվիթերյան իր միկրոբլոգում արձագանքել էր, թե կարծես Հայաստանը խզում է բանակցությունները ԵՄ-ի հետ ազատ առեւտրի առնչությամբ ու դիրքորոշումը փոխում 180 աստիճանով:

ԵՄ բարձր հարթակներից այլ արձագանք չի եղել, միայն տեղեկություն, որ Եվրոմիությունը Երեւանից բացատրություն է սպասում, որպեսզի այդուհետեւ խոսեն հետեւանքների մասին: Միեւնույն ժամանակ, խորհրդարանական մակարդակից, «Ազատությանը» տված հարցազրույցում Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Էլմար Բրոկը**, որը նաեւ Եվրոպայի ամենահզոր քաղաքական ուժի՝ Եվրոպական ժողովրդական կուսակցության գործադիր մարմնի անդամ է, նշել էր, թե ցավում է Հայաստանի որոշման համար: «Մենք գիտենք, որ Հայաստանի վրա ահռելի ճնշումներ են գործադրվել Ռուսաստանի կողմից՝ Ադրբեջանի եւ Ղարաբաղի դժվար իրադրության հետ կապված, եւ որ այդ ճնշումները օգտագործվել են Հայաստանի նման փոքր պետությանը շանտաժի ենթարկելու համար, որպեսզի նման որոշում կայացվի: Ես շատ եմ ցավում, քանի որ իրավաբանորեն եւ որոշ այլ պայմանների պատճառով հնարավոր չէ լիարժեք անդամակցել և՛ Մաքսային միությանը, և՛ ԵՄ Ասոցիացման համաձայնագրին, և՛ Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտուն», ասել է եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյան:

Իսկ թե հնարավոր է հայկական կողմի մտադրության փոփոխություն՝ Բրոկը արձագանքել է. «Հուսով եմ, քանի որ մենք դեռ խոսելու ենք հայկական կողմի հետ... Վերջին տարիների ընթացքում ես մի քանի անգամ քննարկում եմ ունեցել Հայաստանի նախագահի հետ եւ հիմա կարող եմ միայն ենթադրել, որ այստեղ ռուսական կողմի ճնշումն է դեր խաղացել: Եթե հնարավորություն լինի վերադառնալու այս հարցին, ապա շատ կարեւոր է, որ ղարաբաղյան խնդիրը կարգավորված լինի, եւ Հայաստանի նման փոքր պետությունը լուծման տարբերակ գտնի Ադրբեջանի հետ՝ տարածաշրջանի խնդիրները հաղթահարելու համար: Եվրոմիությունը, որը մինչ օրս դրանով չի զբաղվել, պետք է շատ ավելի մեծ հետաքրքրություն դրսեւորի այս սառեցված հակամարտությունը կարգավորելու հարցում»:

Վերջին գաղափարը թերեւս այն հիմնական անկյունաքարն է, որ կարող է դրվել հետագա զարգացումների հիմքում, թեեւ ակնհայտ է, որ Ռուսաստանի կողմից ճնշումները հենց անվտանգության ու ղարաբաղյան խնդրի շուրջը կարող էին լինել: Այդուհանդերձ, հարցազրույցի ավարտին Եվրախորհրդարանի ազդեցիկ պաշտոնյան եւս մեկ անգամ բացառել է հնարավորությունը, որ Հայաստանը կարող է միաժամանակ անդամակցել և՛ Կրեմլի առաջարկած միությանը, և՛ ԵՄ Ասոցիացման համաձայնագրին ու ազատ առեւտրի գոտուն: «Դրանց միջեւ կան իրավաբանական հակասություններ, հնարավոր չէ կիսով չափ հղի լինել», եզրափակել է Բրոկը:

Սա էլ թերեւս պատասխանն է այն դատողություններին ու մեկնաբանություններին, թե Հայաստանի համար ամեն ինչ առջեւում է, եւ որ Հայաստանը կարող է հիմա էլ գնալ Վիլնյուս, նախաստորագրել Ասոցիացման համաձայնագիրը ու այդպես շարունակ: Եվրոպական կողմից բոլոր հնարավոր հարթակներից վերահաստատում ու կրկնում են, որ այստեղ ու այնտեղ լինելու Հայաստանի ցանկությունը չի կարող իրականություն դառնալ:

Այս ամենից հետո մնում է փաստել, որ ներկա դրությամբ Հայաստանը ինչ-որ վակուումի մեջ է հայտնվել, երբ եվրոչինովնիկները չգիտեն դեռեւս ինչպես արձագանքել, իսկ Հայաստանում էլ դեռ հետ ու առաջ մարսում են Սերժ Սարգսյանի հայտարարությունը: Եվ եթե մարդու իրավունքների, տնտեսական ազատությունների ու այլ եվրոպական արժեքների առումով, այո, Հայաստանը չի շահելու մի միությունից, որի հետ անգամ ընդհանուր սահման չունի, ապա ժողովրդավարության առումով ընդհանրապես հիմք չկա երազելու առաջընթաց տեսնել մեր երկրում:

Բոլոր կողմ ու դեմ հաշվարկները, մեկնաբանությունները, դատողությունները մի կողմ թողնելով՝ չնշել, թե Մաքսային միության կողմ շուռ գալն ամենից առաջ ձեռնտու ու հարմար է երկրի օլիգարխներին, մեծ ու փոքր մեղքեր ունեցող չինովնիկներին ու բոլոր նրանց, ովքեր մի քանի սերունդ ժառանգների ապահովվածության հարցը լուծել, մտածում են մի 100 տարի հետո էլ գերապահովված ապրելու մասին, ուղղակի աչքակապություն կլինի: Անվտանգության, ղարաբաղյան հարցի ու էլի շատ գործոնների պարագայում էլ վերը նշվածը, վախենամ, ավելի մեծ դերակատարություն է ունեցել եւ կարող է ունենալ, քան պետության ու երկրի համար առավել կենսականները:

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Խոր վշտով ընդունեցի Հայաստանի Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի մահվան բոթը, որը ծանր կորուստ է հայ ժողովրդի եւ հայ գրականության համար:**

**Լեւոն Անանյանը, որպես մտավորական եւ հասարակական ակտիվ գործիչ, մեծ հայրենասեր, զգալի ավանդ է ունեցել հայ գրականության վերելքի, զարգացման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, ժամանակակից հայ գրականությունը միջազգային ասպարեզ հանելու եւ ներկայացնելու հարցում:**

**Խորին ցավակցությունս եմ հայտնում Լեւոն Անանյանի ընտանիքի անդամներին, նրա ընկերներին եւ Հայաստանի Գրողների միությանը:**

**Ես Ձեզ հետ միասին կիսում եմ անդառնալի կորստի այս ցավն ու վիշտը:**

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ռուսաստանի հայերի միության, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ

**Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքային ողջ կոլեկտիվը խորապես վշտացած է Լեւոն Անանյանի անժամանակ մահվան կապակցությամբ:**

**Մեծ էր նրա՝ փորձառու կազմակերպչի ունեցած դերակատարությունը Հայաստանի Գրողների միության ակտիվ գործունեության կազմակերպման, ինչպես նաեւ հայ լրագրության, հրապարակախոսության, թարգմանական գրականության զարգացման եւ հարստացման գործում:**

**Նրա գործունեությամբ էր պայմանավորված նաեւ մեր կառույցների եւ Հայաստանի Գրողների միության միջեւ ծավալված ակտիվ համագործակցությունը:**

**Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Լեւոն Անանյանի ընտանիքին, հարազատներին եւ գործընկերներին:**

Ռուսաստանի հայերի միություն
Համաշխարհային հայկական կոնգրես

**Հայաստանի ժուռնալիստների միությունը խորապես վշտացած է անվանի հրապարակախոս, ՀԺՄ «Ոսկե գրիչ» մրցանակի դափնեկիր Լեւոն Անանյանի անժամանակ մահվան առթիվ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին:**

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԺՄ նախագահ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանի մրցունակությունն առաջադիմել է 3 կետով

*Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն՝ մեր երկիրը 79-րդն է 148 երկրների մեջ*

Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած մրցունակության համաշխարհային ցուցիչի համաձայն՝ Հայաստանն այս տարի «Համաշխարհային մրցունակության զեկույց 2013/14»-ում զբաղեցրել է 79-րդ տեղը 148 երկրների մեջ նախորդ զեկույցում զբաղեցրած 82-րդ տեղի դիմաց 144 երկրների մեջ: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի ղեկավար **Մանուկ Հերգնյանը**, հիշեցնելով, որ մրցունակության զեկույցը կազմվում է 110-ից ավելի գործոնների հիման վրա, որոնք ընդգրկված են 12 հենասյուների մեջ: Այս առումով մրցունակ երկրների առաջին հնգյակում են Շվեյցարիան, Սինգապուրը, Ֆինլանդիան, Գերմանիան եւ ԱՄՆ-ն:



ԱՊՀ երկրներից լավագույն ցուցանիշն ունի Ադրբեջանը, որն արձանագրել է 7 կետով առաջընթաց եւ 39-րդ տեղում է, Ղազախստանը 50-րդն է մեկ կետ առաջընթացով, Ռուսաստանը 64-րդն է՝ 3 կետ առաջընթաց, Ուկրաինան 84-րդն է՝ 11 կետ հետընթաց, Մոլդովան 89-րդն է՝ 2 կետ հետընթաց, Ղրղզստանը 121-րդն է՝ 6 կետ առաջընթաց, իսկ Վրաստանը 72-րդն է՝ 5 կետ առաջընթաց:

Ինչ վերաբերում է Հայաստանի ցուցանիշներին, ապա բարելավելով իր դիրքը 3 կետով, մեր երկիրն էական առաջընթաց է գրանցել տեխնոլոգիական պատրաստվածության, մակրոտնտեսական միջավայրի կայունության եւ ապրանքային շուկաների արդյունավետության հենասյուներով:

Ավելի մանրամասն ներկայացնելով Հայաստանի մրցունակության հենասյուների փոփոխությունները, Մանուկ Հերգնյանը հայտնեց, որ ինստիտուտների հենասյունի ցուցանիշով առաջ ենք գնացել 6 կետով եւ հիմա 65-րդ տեղում ենք, ենթակառուցվածքների հենասյունով վիճակը նույնն է՝ 80-րդ տեղ, մակրոտնտեսական միջավայրի կայունության ցուցանիշով 19 կետով ենք առաջադիմել եւ հիմա 64-րդ տեղում ենք, առողջապահություն եւ տարրական կրթությունով 5 կետով հետընթաց ենք արձանագրել եւ այժմ 85-րդն ենք, բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում՝ 7 կետ հետընթաց եւ 77-րդ տեղ, ապրանքների շուկայի արդյունավետություն՝ 14 կետ առաջընթաց՝ 58-րդ տեղ, աշխատուժի շուկայի արդյունավետություն՝ 20 կետով հետընթաց եւ 50-րդ տեղ, ֆինանսական շուկայի զարգացվածություն՝ 2 կետ առաջընթաց եւ 76-րդ տեղ, տեխնոլոգիական պատրաստվածություն՝ 20 կետ առաջընթաց եւ 72-րդ տեղ, շուկայի չափ՝ 2 կետ հետընթաց եւ 117-րդ տեղ, գործարար կատարելագործվածություն՝ 5 կետ առաջընթաց եւ 87-րդ տեղ, նորարարություն՝ 2 կետ առաջընթաց եւ 103-րդ տեղ:

Խոսելով հենասյուների գործոնների մասին, Մանուկ Հերգնյանն ասաց, որ որոշ գործոններ, ինչպես օրինակ՝ շուկայի չափը, Հայաստանի համար օբյեկտիվորեն բացասական են, սակայն, օրինակ, գործարար կատարելագործվածություն եւ նորարարություն գործոններով առաջընթացի անհրաժեշտություն կա: Նույնը նաեւ երկրում տաղանդներ պահելու, մաքսային գործընթացների հարցերում: Առաջընթաց արձանագրած գործոններից հիշատակվեցին բջջային կապի եւ ինտերնետի զարգացումը, գերիշխող դիրքի չարաշահումների գծով դրական փփոխությունները, գործարար միջավայրի բարելավումը եւ այլն:

Ամփոփելով զեկույցի ներկայացումը՝ «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի ղեկավարը նշեց, որ Հայաստանը 2005-ից է ընդգրկվել մրցունակության զեկույցում, եւ այդ ժամանակ մենք 79-րդն էինք, մինչեւ 2010 թ. հետընթաց ենք ունեցել, դրանից հետո սկսել ենք առաջընթաց ունենալ եւ այժմ նորից 79-րդ տեղում ենք, թեեւ ավելացել են զեկույցում ընդգրկված երկրների թիվը: «Մենք տեսնում ենք, որ տարածաշրջանային մրցակցությունը ուժգնանում է, եւ մեզ անհրաժեշտ է շատ ավելի մեծ արագություն: Սակայն մեզ մոտ կա ժամանակի սղության ընկալման դեֆիցիտ՝ թե՛ պետական կառավարման համակարգում, թե՛ մասնավոր հատվածում», ասաց Մանուկ Հերգնյանը՝ այս հարցում կարեւոր համարելով մրցունակության, նորարարության, մարդկային ռեսուրսների արդյունավետ զարգացման անհրաժեշտությունը:

Օտարերկրյա ներդրումների մասին խոսելով՝ «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի ղեկավարը այն կարծիքը հայտնեց, որ խոշոր ներդրումները Հայաստանում հիմնականում կատարվել են ենթակառուցվածքներում, եւ նոր ներդրումները կատարվում են ստացված շահույթի վերաներդրմամբ: Այս իրավիճակը բերել է նրան, որ երբ այս ներդրումային ծրագրերը վերջանում են, խնդիր է առաջանում: Մանուկ Հերգնյանի կարծիքով՝ նման վիճակում գտնվող երկիրը պետք է ավելի ագրեսիվ ներդրումային քաղաքականություն իրականացնի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Այո՛, բայց...

Նախագահ Սերժ Սարգսյանի՝ Մոսկվայում կատարած հայտարարությանը, որ Հայաստանը պատրաստակամ է միանալու Մաքսային միությանը, երեկ արձագանքել է Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը նախագահի հայտարարությունը որակել է շրջադարձային, իսկ որոշումը՝ Հայաստանի ապագայի համար հսկայական պատասխանատվություն թելադրող:

Դաշնակցականները ենթադրել են, որ ինչ-որ ժամանակահատվածում, ելնելով աշխարհաքաղաքական իրավիճակից եւ զարգացումներից, Հայաստանը կմիանար Մաքսային միությանը, սակայն դաշնակցականներին մտահոգել է, որ իշխանությունները այդ անհրաժեշտ տեղեկությունները չեն փոխանցել հասարակությանն ու քաղաքական ուժերին:

«Ավելին, որոշ հայտարարություններով նույնիսկ անհնար էին համարել Հայաստանի անդամակցությունը ընդհանուր սահման չունեցող Մաքսային միությանը, տարիներ շարունակ վարել էին բանակցություններ ԵՄ ազատ առեւտրի գոտուն միանալու ուղղությամբ եւ հասել ԵՄ Ասոցիացման համաձայնագրի նախաստորագրման շեմին»: Դաշնակցականները չեն բացառում, որ Մոսկվայում Սարգսյանի անակնկալ որոշման գլխավոր պատճառը ՀՀ եւ ԼՂՀ անվտանգության խնդիրներն են եղել: Այսքանով հանդերձ, Դաշնակցությունը հայտարարում է, որ ցանկացած տնտեսական ինտեգրում պետք է հստակ երաշխիքներ տա ՀՀ եւ ԼՂՀ անվտանգության պահպանման եւ ամրապնդման, տնտեսական համակարգման եւ զարգացման համար: Մաքսային միությանը մաս կազմելու խնդիրը եւս պետք է պլանավորել այս հիմնական սկզբունքներով:

«Մաքսային միությանը Հայաստանի միանալու որոշումը չպետք է խոչընդոտ լինի Հայաստանի՝ եվրոպական ուղղությամբ աշխատանքների շարունակման եւ ծավալման, հատկապես՝ Եվրոմիության հետ մեր երկրի հասարակական-քաղաքական ինտեգրման գործընթացներին»:

Հ. Հ.



## Էներգիայի խնայողության համար

**Կենցաղում էներգիան օգտագործվում է տարբեր նպատակների համար: Մեր երկրում 1 կվտ.ժ էլեկտրական էներգիայի սակագինը կազմում է 38 դրամ, սակայն դա չի նշանակում, որ էներգիայի պաշարները անսահման են եւ կարելի է ծախսել անխնայողաբար: Բացի դրանից՝ վառելիքի այրման հետեւանքով շրջակա միջավայր են արտանետվում հսկայական քանակությամբ վտանգավոր նյութեր՝ ազոտի եւ ծծմբի օքսիդներ եւ այլն:**

**Կենցաղում էլեկտրական էներգիան օգտագործվում է լուսավորության, ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ լսելու եւ դիտելու, էլեկտրական տարբեր սարքերի (փոշեծծիչ, լվացքի մեքենա, սառնարան) բանեցման, սննդի պատրաստման համար: Լվացքի մեքենան կարող է ավելի արդյունավետ աշխատել միայն լրիվ բեռնվածությամբ շահագործվելու դեպքում: Փոշեծծիչները համեմատաբար քիչ էներգիա են պահանջում, երբ աշխատում են ռեժիմով, առանց գերբեռնման: Սառնարանի դռները երկար ժամանակ բաց վիճակում եթե չմնան եւ հերմետիկ փակված լինեն:**

**Ջրի ծորակը փակ եւ սարքին վիճակում լինելու դեպքում եւս էներգիայի խնայողություն կունենանք: Լուսավորության համար պետք է էլեկտրական էներգիան օգտագործվի այն դեպքում, երբ ցերեկային բնական լույսը չի բավարարում: Բնակարանների ներքին լուսավորությունը կախված է կահավորումից, կահույքի դասավորությունից, գույնից եւ այլն: Մեծ նշանակություն ունեն նաեւ պատուհանների մաքրությունը, պատերի լուսավոր երանգները, վարագույրները: Այս պայմաններն ապահովվելու դեպքում բնակարաններում էլեկտրական լուսավորության կարիքը կզգացվի համեմատաբար ուշ ժամերին:**

**Կենցաղում լայն տարածում են գտել սովորական շիկացման լամպերը, սակայն դրանք լյումինեսցենտային եւ հալոգենային լամպերի համեմատությամբ քիչ խնայողական են: Դրանց լուսավորությունը եւ աշխատանքի ժամկետը շիկացման լամպից մի քանի անգամ մեծ են:**

**Սննդի պատրաստման ժամանակ խոհանոցի ամանեղենի ճիշտ ընտրությունը նույնպես կարեւոր նախապայման է էներգիայի խնայողության համար: Ընդհանուր առմամբ խորհուրդ չի տրվում մեծ ամանների մեջ պատրաստել քիչ քանակի կերակուր: Ամանը, որի մեջ կերակուր է պատրաստվում, պետք է ունենա հարմար կափարիչ: Այդ ձեւով կարող ենք խնայել էներգիայի մինչեւ քսան տոկոսը: Պետք է օգտագործել հարթ հատակ ունեցող կաթսաներ: Խորդուբորդ հատակի դեպքում էներգիայի շուրջ 30 տոկոսը կորչում է անօգուտ:**



**Թերեւս ճիշտ կլիներ, ուսումնական հաստատություններում մտցնել նոր առարկա՝ «Էներգախնայողության հիմունքներ»:**

**Էլեկտրական էներգիայի խնայողության, կենցաղային տարբեր սարքերի օգտագործման ժամկետները երկարաձգելու համար պահանջվում է ժամանակին անջատել այն էլեկտրական սարքերը, որոնց աշխատանքն անհրաժեշտությամբ չի թելադրված: Օրինակ, եթե մեր հանրապետության յուրաքանչյուր բնակիչ թեկուզ մեկ ժամ անջատի անտեղի վառվող 100 վատտանոց էլեկտրական լամպը, ապա կխնայվի մոտ 80 հազար կվտ.ժ էլեկտրական էներգիա: Այսքան էներգիա ստանալու համար անհրաժեշտ է ջերմային էլեկտրակայանում այրել մոտ 30 տոննա վառելիք: Մեկ կիլոգրամ վառելիքը այրելու համար անհրաժեշտ է 2000 լիտր թթվածին: Մինչդեռ, այսօր կանաչ զանգվածները չեն հասցնում արտադրել անհրաժեշտ թթվածինը:**

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

## Մահազդ

Մասիս Միքայելյանը եւ Մարիետա Խաչատրյանը վշտով հայտնում են սիրելի հոր եւ սկեսրայրի՝ **Ավագ Միքայելյանի** մահը:

*Հոգեհանգիստը՝ այսօր, հուղարկավորությունը՝ վաղը Ավան, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, տուն 1 հասցեից:*

«Ազգ»-ը ցավակցում է հանգուցյալի հարազատներին:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

▼ Ձեխական «Կարմա» գազի վառարան (70000 դրամ):

Հեռ.՝ 094-48-68-03

# Սուֆիաս Թորոսյան. «Ես վերջակետ չեմ դնում»

***Սուֆիաս Թորոսյանին՝ Տոտոյին շատերն են ճանաչում: Ոմանք՝ որպես երգիծանկարչի, ուրիշները նրա հետ ծանոթացան հայոց գրատպության 500-ամյակի առիթով Նկարչի տան՝ հայոց այբուբենի տառերը գեղանկարչությամբ շնչավորած հրաշալի նկարների ցուցահանդեսով: Ուրիշները ներկա են եղել նրա բեմադրած օպերային ներկայացումներին: Մի արվեստագետ, որը թվում է՝ միավորում է իրար այնքան հակընդդեմ ռեժիսորին, գեղանկարչին, երգիծանկարչին, եւ ինչու չէ՝ իսկապես հումորով մարդուն: Նրա հետ զրույցը միշտ էլ անսպասելի շրջադարձեր է ունենում, սովորաբար զրույցից հետո միշտ մտածում ես, որ նա ասում էր մակերեսին, լեզվի վրա եղածը, իսկ խորքում եղածն իրեն է պահում: Երգիծանկարիչների ընկերակցության նախագահի, նկարչի եւ ռեժիսորի հետ այս մի զրույցից որոշ պատառիկներ ընթերցողին ներկայացնելով՝ հույսով ենք ոչ թե հետաքրքրություն ստեղծել արվեստագետի անձի հանդեպ, այլ, ընդհակառակը, նրա ներսում եղած հետաքրքրականը փոխանցել եւ մտորել նրա մտահղացած պրոբլեմների շուրջը:***

**- Ներքաղաքական լրագրությանը զուգահեռ՝ քաղաքական երգիծանկարչությունը թվում է ինքնուրույն մի բան, համենայն դեպս՝ «Ազգ»-ում. որպես քաղաքական երգիծանկարի հեղինակ ի՞նչ ես մտածում քաղաքականության մասին:**

- Ինձ համար քաղաքականության մեջ ոչ մի նոր բան չկա՝ ամեն ինչ արդեն ասվել է վերջին քսան տարում, ամեն ինչի մասին գրվել է: Բայց մենք հետեւողական չենք. մի բանն ասվում ու մնում է օդում՝ չենք խորանում, չենք հասնում հարցի լուծմանը: Որ շատ է ասվում նույն բանը՝ կապած շան հաչոցին է նմանվում: Եթե ուսումնասիրենք՝ ի՞նչ է գրվել մի քսան տարի առաջ, դրանք ի հայտ բերենք, դա բավական է պատկերացնելու համար մեր ապագան... Քաղաքական երգիծանկարիչներից էսօր երկու-երեքն են մնացել ընդամենը, նրանք էլ նույնը կասեն:

**- Մի վեց-յոթին միայն ես եմ ճանաչում, ուզում ես կռվեն հե՞տդ...**

- Չէ, ես անգամ գումար էի ստանում մի թերթից, որ չնկարեմ, իսկ ավելի շուտ՝ նկարում էի, չէին դնում թերթում: Ինձ թվում է՝ ավելի լավ է գումար չստանամ... Իսկ շատ-շատ երգիծանկարիչներ հիասթափվեցին-հեռացան մամուլից, որովհետեւ մարդիկ նեղանում են երգիծանքից: Երգիծանկարի դեպքում հերքում չկա, չէ՞, օրենքներով, շատ-շատ պատասխան պետք է գրես երգիծանկարով: Ուրեմն ինչ, հերքում պահանջողը պիտի ուզի, որ նկարածիդ հակառակը նկարե՞ս՝ ավելի ծիծաղելի կստացվի...

**- Վիրավորանքի եւ զրպարտության մասին օրենքի կետը ձեզ վրա էլ է տարածվում...**

- Տարածվում է՝ եթե նկարելով ես արել, պետք է նկարելով էլ ներողություն խնդրես: Մի անգամ եղել է՝ այդ ժամանակ «Առավոտ» թերթում էի աշխատում: Դատարանի հետ կապված նյութ էի արել, դատավորը շատ էր նեղացել, ասել էր՝ դատի կտա ինձ էլ, թերթին էլ, ու պետք է հերքվի: Ես հակառակ իմաստով նկարեցի՝ էս անգամ ավելի էր նեղացել...Բայց ... էլ չդիմեց հերքման պահանջով, հասկանալով, որ խորանալ չի կարելի...

Բայց հետո այդ երգիծանկարն ուղարկեցի Բելգիայի մի ցուցահանդեսի եւ առաջին մրցանակ ստացա՝ ինքնուրույն կյանք էր ստացել նկարը դատական համակարգի մասին թեմայով: Սա է ամենակարեւորը՝ որ երգիծանկարն անկախ օրվա թեման լինելուց՝ հետագա կյանք ունենա: Դա ոչ միայն երգիծանկարին է վերաբերում, այլեւ հավասարապես նաեւ լրագրությանը:

**- Քո երգիծանկարչությունն, այդպիսով, լրագրության մաս ես համարում փաստորեն...**

- Ինչ-որ մի տեղ համարում եմ, որովհետեւ երգիծանկար որ ասում են, հո չի նշանակում, թե միայն պետք է նայես ու ծիծաղես: Կարող է զուտ գրաֆիկական լուծում լինի՝ եթե նյութի մեջ պետք է իմաստ լինի, նկարածիդ մեջ էլ պետք է իմաստ լինի:

**- Քո կարծիքով՝ ինչ որ անում ես՝ բարությա՞մբ ես անում:**

- Նայած ինչ աստիճանի զայրացած կլինեմ նյութի վերաբերյալ: Եթե ես մտածեմ, որ պետք է ոչնչացնեմ, այսինքն՝ ոչնչացնել էն իմաստով, որ պետք է կոնկրետ էդ արատը ոչնչացնել, արմատախիլ անել, կարող է եւ ծայրահեղացված դրսեւորում լինի իմ նկարում, կամ հակառակը, եթե տեսնում ես ուղղվող, շտկվող բան է՝ շատ բարի ես լինում: Սա երգիծանք է: Ընդհանրապես՝ աշխատում եմ շատ քիչ սարկազմ մտցնել, միշտ թողնում եմ երկրորդ, մտածելու տեղ տվող շերտը: Եթե շատ ճակատային ես տալիս՝ կանաչը՝ կանաչ, սեւը՝ սեւ, հիմարը՝ հիմար, անհետաքրքիր է, որովհետեւ մի փոքր պետք է տեղ թողնես մտածելու-համեմատելու, խորհելու: Ես բազմակետ եմ դնում փաստորեն նկարների վրա, որովհետեւ վերջակետով հարց չի լուծվի: Երեւի դրա համար իմ նույն նկարի վերաբերյալ եթե հարյուր հոգու հարցնենք, հարյուրն էլ տարբեր ձեւով կմեկնաբանեն: Ինձ թվում է՝ դա առավելություն է:



**- Ամեն օր կարելի է լսել, որ թերթը մեռնում է, ինտերնետի դար է, եւ այլն, իսկ երգիծանկա՞րը, որը նույնպես ավելի տպագիր մամուլի հետ է կապվում: Չնայած կան կայքեր, որ լավագույնս օգտվում են ժանրից, բայց թղթի, մատիտի, գրիչի խնդիրը կարծես վերանում է այս դեպքում...**

- Տեխնոլոգիաներն էսօր թույլ են տալիս հեշտ միջոցներով ստանալ արդյունքներ: Երբ հեշտ ես ստանում, շատ երկար չես մտածում, այստեղից այնտեղից կպցնում ես իրար՝ նյութ լինի, թե երգիծանկար: Արագություն, այո, լինում է, բայց կորցնում ես շատ կարեւոր բաներ, եւ ասելիքդ մինչեւ վերջ չես կարողանում ասել: Շատ հպանցիկ, թեթեւ, կեսակնարկային՝ էս տեսակ մի բան ես ստանում: Սինթեզատորը կարելի է սեղմել եւ ստանալ երաժշտություն, բայց դա քոնը չի լինի մի տեսակ: Փորձել եմ՝ չի գոհացրել, դաստիարակվել եմ թղթի հետ շփման եւ փոխհարաբերության հենքով, թեեւ առաջիններից մեկն եմ Հայաստանում համակարգիչ գնել 1991 թվականին դեռ, բայց թղթի հետ կենդանի շփման արդյունքում ծնված գործը մի ուրիշ բան է: Երգեհոնը մեծ գործիք է, ոնց էլ նվագես՝ երաժշտություն կգա, բայց երգեհոնով Բախ լսելն է, չէ՞, երանությունը: Այնպես որ՝ համակարգչային նկարչությունը համարում եմ երեխայական զվարճանքի պես մի բան, կգա մի պահ՝ կհագենան, կհասկանան, որ դա «շարիկ գլորելու» պես մի բան է, ժամանակը մեռցնող, բան չասող, մի քիչ դմբոյացնող: Էն է՝ կայքերից արդեն հիասթափվում են, ֆեյսբուքյան ընկեր-ընկերուհիներն իրարից նեղանում են, գաղտնիքներն ի հայտ են գալիս: Այնպիսի զգացողություն է՝ կարծես ամեն ինչն է դեկորատիվ բնույթ ստանում՝ ուտելիք, հագնելիք, գիտություն: Էդ շրջանն էլ կանցնենք, ու ինձ թվում է, որ նորից կգա հոգեւորի սովն ու ծարավն զգալու ժամանակը, ու անկախ մեզանից՝ ենթագիտակցությունը կթելադրի, որ մենք անդրադառնանք հոգեւորին: Ես գերադասում եմ հոգեւոր ասելիքը, այդ տեսակ արվեստի զինվորն եմ: Չի գնահատվում, քիչ ենք փող աշխատում, ինձ թվում է՝ դա երկրորդական խնդիր է, որովհետեւ քիչ մարդկանց վրա է պահվում հոգեւորը՝ երաժշտությունը, նկարչությունը, գիրքը, գրականությունը, գիտությունը:

**- Տարիներ շարունակ նույն ձեւի մեջ նկարելը (երգիծանկարը նկատի ունեմ) չի՞ սպառում քո ներսի կերպարները, չե՞ս հոգնում:**

- Ես անբուժելի լավատես եմ. ամեն բանին ոչ թե վատ հայացքով, վայ-վույով եմ նայում, այլ... Բժիշկը որ մարդուն նայում է՝ ավելի շատ նրա հիվանդություններն է տեսնում, չէ՞, մոդելյորը հագուկապին է նայում, վարսավիրը՝ մազերին, ես էլ մարդու ծիծաղելի կողմերն եմ նկատում՝ արհեստ է: Մի խոսքով՝ օրվա մեջ 10 երգիծանկար կարող եմ անել, ու դրանից հետո գուցե մի քիչ հոգնեմ: Կերակուրի նման բան է:

**- Անցնե՞նք մյուս ոլորտներին...**

- Ոզնիների թատրոնի հիմնադիրը ես եմ եղել՝ Վարդան Պետրոսյան, Վահրամ Սահակյան՝ էդ խմբի,1983-ին ավարտեցինք գեղարվեստաթատերական ինստիտուտը: Երրորդ կուրսից նկարիչներից բաղկացած մի փոքր թատրոն ունեի, եւ մի քանի դերասան՝ Մազմանյանը, Քրիստ Մանարյանը մեզ մոտ են եղել: Բեմադրություններ էի անում, մեզ նույնիսկ առաջարկեցին տեղափոխվել ռեժիսորական բաժինը: Արդյունաբերական գրաֆիկայի բաժինն եմ ավարտել:

Լենինգրադում, Ռեպինի անվան ակադեմիայում էի սովորում մեծ սիրով եւ մեծ հույսերով, որ պետք է աշխարհը գրավեմ, բայց սյուրռեալիզմի համար ինձ հանեցին այնտեղից: Դեռ լավ է՝ քաղաքական հոդվածներ վրաս չգրեցին՝ տասնութ տարեկան չկայի, բոլոր գնահատականներս «հինգ» էին, կոմպոզիցիայից ընդհանրապես գնահատական չկար դրած, «հինգը» քիչ էին համարում...

**- Տարիների ընթացքում ո՞վ է հաղթել՝ դերասանը, ռեժիսորը, նկարիչը:**

- Լեոնարդո դա Վինչին եւ քանդակագործ էր, եւ ճարտարապետ էր, եւ բժիշկ էր: Երբ հարցերին մոտենում ես համալիր լուծում տալու տեսակետով, տեսնում ես, որ միայն կտավը, նկարը չի բավարարում, պետք է արտահայտելու նաեւ ուրիշ ձեւեր գտնես: Երգիծանկարին զուգահեռ գեղանկարիչ միշտ եղել եմ: Այսօր գեղանկարիչներն ավելի շատ են երգիծական նկարչություն անում. դե ասա՝ եթե դեֆորմացված դեմքեր են անում, իբր կրեատիվը հիմիկվա, մենք էլ աշխատում ենք նորմալ նկարել, սա կատակ չէ՞: Երբեմն մեր նկարիչների գործերը նայում ու չես հասկանում՝ որտե՞ղ է վերջանում երգիծանքը, որտեղ սկսվում գեղանկարը կամ գրաֆիկան: Մի հատ մեծ կոկտեյլ են սարքել-ասում են՝ սա արվեստ է: Ճանապարհներից մեկն է, որ կարող է մի նոր արդյունք տալ գուցե, աշխարհն է դրան գնում: Առաջին անգամ բեմում որ նկարում էի ներկայացման մեջ՝ զարմացրել էի: Հիմա դա աշխարհում անում են: Բայց երբ դա արհեստ է դառնում՝ ներկայացումը կարող են փակել արդեն:

**- Ինչ-որ դառնություն նկատեցի:**

- Հա, իմ ճշմարտությունը, բարությունը, լավատեսությունը մեկ-մեկ խանգարում են ինձ: Էդ տեսակ մարդիկ կան, էլի, էն որ ասում են՝ լեզուն (իմ դեպքում՝ գրիչը) չի կարողանում պահի: Այ, եթե ես հանդուրժողական լինեմ, մի բան տեսա՝ լեզուս ու գրիչս ինձ պահեմ ու չնկատելու տամ՝ գործերս լավ կլինեին:

**- Գործերդ լավ չե՞ն:**

- Շատ լավ են՝ իմ ձեւի մեջ:

Շատը գիտե՞ս որն է՝ որ չեն եկել ու դիտել իմ ներկայացումը, բայց գովել են մամուլում: Սա ինձ համար վատ է: Ավելի լավ է՝ գան-վատը գրեն, բայց չնայելով չգրեն:

Դե՝ ես ծնվել եմ օպերայում, երկուսուկես տարեկանից հայրս տարավ՝ «Մադամ Բատերֆլայ» ներկայացման մեջ խաղացի, այն ժամանակ աշխարհահռչակ երգչուհի Բիեշուն էր եկել.. եւ լացացրեցի բոլորին, ինչպես ասում են՝ բոլորը հուզված էին, լացում էին, ասում էին՝ էս երեխեն ծնվել է բեմի համար, ու մնացի այնտեղ մինչեւ հիմա: «Ռաբիս» ասված երաժշտությունը չեմ կարողանում լսել, որովհետեւ փոքր ժամանակից օպերային երաժշտություն եմ լսել: Երբ օպերային երաժշտություն եմ լսում՝ կարող է հուզվեմ եւ լաց լինեմ:

Տատիս քույրերը եղել են Ֆելեկյան քույրերը, որոնք Ստամբուլում շատ հայտնի դերասանուհիներ էին՝ Տոտո Քարաջա բեմական անունով. նրանցից մեկը երգիծանքի մեծ դերասանուհի էր, որի մահվան օրը նույնիսկ կառավարությունը սգո օր հայտարարեց: Գենետիկ խառնվածք գոյություն ունի:

**- Հա, դերասանը մեջդ նստած է՝ առօրյա կյանքում անընդհատ մենք տեսնում ենք...**

- Ես հինգ օպերային ներկայացում եմ իրականացրել: Ուսանողական տարիներից սկսած՝ մեկն արել եմ, հետո «Գավիթ» թատրոն եմ ունեցել, «**Ազգ**»-ին կից է եղել, ուղիղ մեկ տարի խաղացել ենք: Վերջին տասն տարվա ընթացքում հինգ ներկայացում եմ բեմադրել. «Մադամ Բատերֆլայ» կամ Պուչինի՝ «Չիո չիո սան». համ ռեժիսորն էի, համ զգեստների նկարիչը, այսինքն՝ բեմադրիչն ու նկարիչ-բեմադրիչը, կոնցեպտուալ ամեն ինչ իմն էր:

Տես էջ 6

# Եթե Եվրասիական միությունը հետաքրքրական դառնա Վրաստանի համար, ինչո՞ւ ոչ


Մայա Փանջիկիձե

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին դեռեւս որեւէ հեռանկար չի տեսնում իր երկրում Եվրասիական միությանն անդամակցելու առնչությամբ: Այդ մասին, ըստ «Գրուզիա օնլայն» լրատվական գործակալության, հայտարարել է միլիարդատեր վարչապետը՝ երեկ մամուլի հետ հանդիպման ընթացքում պատասխանելով Ռոյթեր գործակալության լրագրողի հարցին:

«Ես ուշադիր ուսումնասիրում եմ Եվրասիական միության հարցը: Մենք դեռեւս ոչ մի դիրքորոշում չունենք այդ հարցում, քանի որ որեւէ հեռանկար չեմ տեսնում, սակայն եթե հեռանկարում տեսնենք, որ դա հետաքրքրական է մեր երկրի ռազմավարության համար, ապա՝ ինչո՞ւ ոչ», ասել է Իվանիշվիլին:

Նույն հարցի առնչությամբ Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեի հայտարարությունն ավելի կոշտ է՝ պրագմատիկ ու գրեթե ամեն ինչին բիզնեսմենի դատողությամբ մոտեցող վարչապետ միլիարդատիրոջ համեմատությամբ: Մասնավորապես, Փանջիկիձեն, ի պատասխան վարչապետի խոսքերը մեկնաբանելու հարցի, նախ շեշտել է, թե Եվրասիական միությանն առնչվող զարգացումներին հետեւում է ոչ միայն Վրաստանը, այլեւ ողջ աշխարհն ու նույն Եվրոմիությունը:

«Այդ գործընթացը տեղի է ունենում Վրաստանի հարեւանությամբ, եւ պետք է տեսնել, թե ինչ կա հետաքրքրական Եվրասիական միությունում», ասել է վրաց արտգործնախարարը, ավելացնելով, թե հետաքրքրական է՝ ինչպես կլինեն եվրասիական միության հարաբերություններն ու զարգացումները Եվրոմիության ու Առեւտրի համաշխարհային կազմակերպության հետ: Ըստ Փանջիկիձեի, Եվրասիական միությունը արդիական չէ Վրաստանի համար, արդիական են Վիլնյուսում Ասոցիացման համաձայնագրին առնչվող քայլերը, այսինքն՝ Վրաստանի ռազմավարական արտաքին քաղաքական վեկտորը մնում է ուղղված դեպի Եվրոպա եւ եվրատլանտյան ինտեգրացիա:

Ադրբեջանում այդ միությանն առնչվող հարցերին գրեթե չեն անդրադառնում, թեեւ քաղաքագիտական մակարդակում ինչ-որ հայտարարություններ արվել են, սակայն դրանք ավելի շատ Հայաստանի շուրջը ստեղծված իրավիճակին են վերաբերում, քան Ադրբեջանի ու Եվրասիական միության հնարավոր ընդհանուր ապագային, որպիսին ոչ մեկը հարեւան երկրում չի տեսնում:

Հայաստանի նախագահի՝ սեպտեմբերի 3-ին Մոսկվայում Մաքսային միությանը միանալու մասին «Հայաստանի կայացրած որոշման» բարձրաձայնումից հետո այդ միությանն առնչվող հարցերը մտնում են նաեւ հարեւան երկրների օրակարգ, թեեւ, որքանով պաշտոնապես հայտարարվում է, այդ հարցն ընդհանրապես օրակարգում չէ: Հանուն արդարության նշենք, որ այդ հարցը կարծես մեր օրակարգում էլ չկար, սակայն անակնկալ ձեւով այնպես ստացվեց, թե ոչ միայն հարցն է եղել, այլեւ կայացվել է որոշում, թեեւ ով է այդ ամենին մասնակցել՝ հայտնի չէ:

Վ. Պ.

ՏՈԿԻՈ

# Ուժեղ երկրաշարժ Ճապոնիայում



**Ճապոնիայի կենտրոնական մասում սեպտեմբերի 4-ի առավոտյան տեղի է ունեցել 6,9 մագնիտուդով երկրաշարժ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Երկրաշարժը զգացվել է Տոկիոյում եւ Հոնսյու կղզու ամբողջ արեւելյան ափին, այդ թվում՝ Ֆուկուշիմա պրեֆեկտուրայում: Սակայն «Ֆուկուշիմա-1» վթարված ատոմակայանը որեւէ նոր վնասվածք չի ստացել:**

**Երկրաշարժից ոչ ոք չի տուժել: Օջախը եղել է Խաղաղ օվկիանոսում, 400 կմ խորության մեջ, Տոկիոյից մոտավորապես 580 կմ հարավ:**

**2011-ի մարտին 9 մագնիտուդով սաստիկ երկրաշարժը եւ դրան հաջորդած ցունամին լրջորեն վնասեցին «Ֆուկուշիմա-1» ատոմակայանը: Վթարի պատճառով իշխանությունները տարհանեցին 160 հազար մարդու: Սպասվում է, որ վթարի հետեւանքների վերացումը կտեւի 40 տարի եւ կարժենա ավելի քան 11 մլրդ դոլար:**

Պ. Ք.

# Նոր վիրահատական դանակ

**Լոնդոնի «Իմպերիալ քոլեջի» հետազոտող գիտնականների խումբը վերջերս նոր վիրահատական դանակ է հայտնագործել, որին տվել է «iknife» (խելացի դանակ) անունը, որտեղ «i»-ն «intelligent» բառի սկզբնատառն է, տեղեկացնում է «Irish Health» պարբերականը, որտեղից լուրը արտատպել է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը: Նորաստեղծ դանակը գրեթե հարյուր տոկոսի ճշգրտությամբ կարողանում է վիրաբույժներին տեղեկացնել, թե կտրվող հյուսվածքը քաղցկեղով վնասված է, թե ոչ: Հայազգի պրոֆ. լորդ Արա Դարզին, որը համահեղինակ է նորարարության, բացատրում է, որ քաղցկեղով հիվանդ մարդու վիրահատության ժամանակ շատ կարեւոր է հնարավորին քիչ առողջ հյուսվածքներ հեռացնել: Նոր դանակը տալիս է այդ հնարավորությունը: Առայժմ 91 հիվանդների հյուսվածքների ուսումնասիրությունը բացահայտել է, որ դանակը ճիշտ է կողմնորոշվում: Եթե լաբորատոր ստուգումները մոտ կես ժամ էին պահանջում, «խելացի» կամ «հասկացող» դանակը այդ նույն տեղեկությունը՝ հյուսվածքի քաղցկեղով վարակված լինել-չլինելու վերաբերյալ, տալիս է ընդամենը 3 վայրկյանի ընթացքում: Նման հնարավորությունը մեծապես կրճատելու է կրկնագոյացումները, համոզված են գիտնականները:**

**Նորաստեղծ վիրաբուժական դանակի մասին հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել «Science Translatronal Medicine» պարբերականում:**

Հ. Ծ.

# Խոսքը «տասը ռուբլիով» Սոչի հանգստանալու գնալու մասին չէ

*1-ին էջից*

Հասկանալի է, որ Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանն այդ օրենսդրությունը լիովին պարտավորվելու է համապատասխանեցնել արդեն իսկ անդամ երկրների համապատասխան օրենսդրությանը:

Կնշանակի՝ իմաստ չունի գալիք նոյեմբերին ԵՄ-ի հետ նախաստորագրել Ասոցիացման համաձայնագիրը, քանի որ վերջինի կարեւորագույն կետերից մեկն էլ հենց սա է՝ Ազատ, խոր եւ համապարփակ առեւտրի համաձայնագիրը: Երեկվա համարում «**Ազգը**» արդեն իսկ հարցադրումներ բարձրացրել է Հայաստանին համառորեն դեպի Եվրոպա տանող եվրոպաշտոնյաների հնարավոր արձագանքների վերաբերյալ՝ կապված «Հայաստանի որոշման» հետ, այժմ խոսենք այն մասին, թե իսկ էլ ի՞նչ որոշում պետք է ունենար Հայաստանը, կամ կարո՞ղ էր արդյոք մեր երկիրը որեւէ այլ որոշում կայացնել:

Իրավիճակն, անշուշտ, խիստ ուշագրավ է, որովհետեւ կարծես թե Հայաստանն իր «ավանդական» կոմպլիմենտար քաղաքականությամբ առաջին անգամ խախտում է բալանսը՝ հօգուտ ռազմավարական դաշնակցի, ինչպես մեզանում, ոմանք լուրջ, ոմանք էլ՝ հեգնանքով, անվանում են Ռուսաստանին: Իրականում Ռուսաստանի՝ մեզ համար ռազմավարական դաշնակից լինելը չէ, որ ապացուցելու կամ հերքելու ենք, ոչ էլ խոսելու ենք այդ երկրում վերջին տարիներին հստակապես ձեւավորված հայկական ամենահոծ համայնքի մասին: Խոսքը երկու՝ այս պահին անհամեմատ ավելի կարեւոր բաների մասին է՝ փողի եւ Ադրբեջանի: Ըստ ադրբեջանական որոշ աղբյուրների՝ վերջերս Բաքվում գտնվող ՌԴ նախագահ Պուտինը «շուրջ 7 ժամ» առանձնազրույց է ունեցել Իլհամ Ալիեւի հետ: Սերժ Սարգսյանի հետ Պուտինը զրուցեց իր մերձմոսկովյան նստավայրում եւ ոչ թե «շուրջ 7 ժամ», այլ գրեթե մեկ ժամ: Ալիեւը, Պուտինի հետ հանդիպելուց հետո ամենեւին էլ հայտարարությամբ հանդես չեկավ, թե «Ադրբեջանը որոշում ունի Մաքսային միությանը միանալու վերաբերյալ», չնայած «շուրջ 7 ժամ տեւած զրույցին», փոխարենը Պուտինի հետ անհամեմատ ավելի քիչ զրուցելուց հետո Հայաստանի հիշյալ որոշման մասին հայտարարեց նախագահ Սարգսյանը: Հետեւաբար, կամ Ռուսաստանը չունի Ադրբեջանին ճնշելու ազդու լծակներ, կամ Պուտինին այս պահին գոնե ամենեւին էլ պետք չէ Բաքվի՝ Մաքսային միությանը միանալու որոշումը:



Մինչդեռ Ադրբեջանի որոշումը այս առումով անչափ կարեւոր է Հայաստանի համար, անշուշտ, սեփական որոշումը կայացնելուց հետո: Բանն այն է, որ աշխարհաքաղաքական այս կամ այն միավորմանն անդամակցելու Հայաստանի ու Ադրբեջանի որոշումներից է մեծ մասամբ այսօր նաեւ պայմանավորված ԼՂ հիմնահարցի լուծումը: Այսինքն, եթե, օրինակ, տարիների ընթացքում Հայաստանն ու Ադրբեջանը հայտնվում են տարբեր միավորումների մեջ, ապա դա անհամեմատ բարդացնում է հակամարտության լուծումը, դարձնում գրեթե անհնարին: Եթե երկուսն էլ հայտնվում են միեւնույն միավորման մեջ, հիմնահարցի լուծումն ու դրա ինչպիսին լինելն արդեն կապված կլինեն, թե կոնկրետ ո՞ր միավորմանն են անդամակցել երկու երկրները. եվրոպականը գոնե երաշխիքներ չի տալիս այս առումով մեզ, իսկ ռուսական «տիրույթն», իհարկե, դառը հուշեր է արթնացնում մեզանում...

Եվ փողի մասին. Եվրոպայից, Արեւմուտքից առհասարակ Հայաստան իհարկե մտնում են ֆինանսական միջոցներ, որոնց թիվը հստակապես շատացել է վերջին տարիներին, երբ Հայաստանն, ընդգծելով իր՝ «եվրոպական ընտանիքի մի մասը լինելը», քայլեր էր ձեռնարկում եվրոինտեգրման նպատակով, որոշակիորեն օգտվելով ԵՄ-ի հռչակած «Ավելին՝ ավելիի դիմաց» հայտնի քաղաքականությունից: Սակայն, անգամ այս համապատկերում, գաղտնիք չէ, որ այսօր Հայաստան մտնող փողի հսկայական մասը ոչ միայն գալիս է Ռուսաստանից, այլեւ կենտրոնացած է Ռուսաստանում: Իհարկե, արեւմտյան երկրներում գտնվող մեր հայրենակից գործարարները եւս իրենց ներդրումները (թեկուզ նվիրատվությունների կարգով) անում են հայրենիքում, բայց ռուսաստանահայ գործարար շրջանակները, հասկանալի է, ոչ միայն ձեւավորում են, օրինակ, «Հայաստան» համահայկական հիմնադրամում ամեն տարի հավաքված գումարի մեծ մասը, այլեւ ազդեցություն ունեն Հայաստանի քաղաքական որոշումների վրա:

Դրանցից մեկը սեպտեմբերի 3-ին Մոսկվայում բարձրաձայնեց ՀՀ նախագահը: Մնում է հասկանալ, ի՞նչ էր Ասոցիացման համաձայնագիրը ԵՄ-ի հետ, որը, փաստորեն, անիմաստ դարձավ, եւ ի՞նչ է, ըստ էության, Մաքսային միությունն իր Եվրասիական միություն հեռանկարով, որին միանալու «որոշում ունենք»: Իսկ սա հասկանալու համար պետք չէ շատ խելացի լինել, առավել եւս այդպիսին երեւալ, պարզապես անհրաժեշտ է ժամանակ:

Հասկանալի է, որ խոսքը «տասը ռուբլիով» Սոչի հանգստանալ գնալու մասին չէ, ինչպես Սովետի ժամանակներում...

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Տիգրան Մանսուրյան. «Կոմիտասի ստեղծագործություններն այսօր քարոզչության կարիք ունեն»

Սեպտեմբերի 5-ին Նարեկացի արվեստի միությունը նշում է հիմնադրման 9-րդ տարեդարձը: Կոմիտասյան շնչով կողողվի այս տարի միջոցառումների ծրագրերի շարքը: Կոմպոզիտորին, բանահավաքին, երաժշտագետին Կոմիտասի ստեղծագործությունները կհնչեն իր ձեռագրերի տառին ու ոգուն հնարավորինս հարազատ բնագրային ճշգրտությամբ՝ առանց մշակումների, նրա ժառանգությունը՝ թե կոմպոզիտորական, թե գիտական, կներկայացվի հնարավորինս համակողմանիորեն: Ի դեպ, միջոցառումների ընթացքում կներկայացվի նաեւ Կոմիտասի կյանքը՝ արխիվային լայնածավալ հավաքածուի ցուցադրմամբ:

Նարեկացի արվեստի միության հիմնադիր **Նարեկ Հարությունյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ արդեն ավանդույթ է դարձել յուրաքանչյուր տարի տարեդարձները նշել մեր մեծերի հետ. «Որքան մոտենում ենք մեր մեծերին, հասկանում ենք, թե ով ենք: Որքան մոտենում ենք Կոմիտասին, այնքան Աստծուն ենք մոտենում»:

Սեպտեմբերի 5-ից 9-ը նախատեսված է անցկացնել փաստագրական ցուցահանդես, համերգաշար, ինչպես նաեւ դասախոսություններ Կոմիտասի մասին:

Ցուցահանդեսը հիմնված կլինի Կոմիտասի մասին պատմող փաստագրական նյութերի վրա. նամակներ, գծանկարներ, լուսանկարներ, խազագրեր եւ նոտագրեր Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հավաքածուից: Ցուցադրության մեծ մասը հանրությանը կներկայացվի առաջին անգամ: Դասախոսությունների ծրագիրը կազմված է այնպես, որ Կոմիտասի գործն ու ստեղծագործությունը ներկայացվի տարբեր տեսանկյուններից: Այսպես Կոմիտասի ստեղծագործության երաժշտական վերլուծությամբ հանդես կգա կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը: Կոմիտասագետ, կոմպոզիտոր, երաժշտագետ Արթուր Շահնազարյանի դասախոսությունը Կոմիտասի ժառանգությունը քննության կառնի հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտության առավել լայն պատմական շրջանում, իսկ երաժշտագետ Մհեր Նավոյանը կխոսի Կոմիտասի մասին մշակութային հարցերի եւ ինքնության խնդրի համատեքստում:



Համերգային ծրագիրը նույնպես մշակվել է զգուշությամբ եւ այնպես, որ Կոմիտասի ժառանգության հարուստ ներկապնակը ինչքան հնարավորինս ամբողջական ժանրային տարողությամբ ներկայացնելով Կոմիտասի թե կոմպոզիտորական ստեղծագործությունները, թե մշակումները: Ու քանի որ համերգը կազմակերպված է Կոմիտասին ավելի խորը ըմբռնելու ցանկությամբ, բոլոր կատարումները կարվեն նրա բնագրերին հնարավորինս հարազատ մեկնաբանություններով:

Սեպտեմբերի 5-ի համերգին կհնչեն Կոմիտասի գեղջկական երգերը, մեներգերը եւ խմբերգերը Անուշ եւ Եվա Ստեփանյանների, Գոհար Մարտիրոսյանի, Վարուժան Մարգարյանի, Ավագ Մարգարյանի (բլուլ), Վաչե Շարաֆյանի (դաշնամուր) եւ «Վեմ« երգչախմբի կատարմամբ, սեպտեմբերի 8-ին կհնչեն հոգեւոր եւ ժողովրդական ստեղծագործությունները «Գեղարդ» երգեցիկ խմբի մեկնությամբ, իսկ սեպտեմբերի 9-ի հանդիսավոր փակման գալահամերգին Կոմիտասի մեներգերը, խմբերգերը եւ դաշնամուրային ստեղծագործությունները կկատարեն Մարգարիտ Շահինյանը, Աննա Մայիլյանը, Լուսինե Գրիգորյանը (դաշնամուր) եւ Հայաստանի պետական կամերային երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Ռոբերտ Մլքեյան) կատարմամբ: Փակման համերգը տեղի կունենա Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Կոմպոզիտոր **Տիգրան Մանսուրյանը** կարծում է, որ պետական մարմինները նույնպես հակված են աջակցելու, որ Կոմիտասի դերն ավելի մեծանա մեր կյանքում. «Բոլորս մտահոգություն ունենք Կոմիտասով ապրելու, եւ սա գալիս է մի քանի ժամանակավոր երեւույթներից, որոնք անցողիկ են: Դուք նկատի ունեցեք, որ մենք խոսում ենք մի հսկա մոնումենտալ հիմքի մասին, որն ինքնին հայ կոմպոզիտորական դպրոց հասկացություն է: Անհամատեղելի է Կոմիտասին համեմատել օրվա անցողիկ հաճույքների հետ: Կոմիտասի ստեղծագործություններն այսօր քարոզչության կարիք ունեն, սակայն, մյուս կողմից, ունենք նաեւ մի շարք նվիրյալներ, որոնք հենց այդ գործով էլ զբաղվում են»:

Մանսուրյանն ուրախությամբ նշում է նաեւ, որ Նարեկացի արվեստի միությունը ծանր ու լուրջ անունների շուրջ ստեղծում է տոնական մթնոլորտ, որը ողջունելի է. «Ուրախ եմ նշել, որ այս միությունը միշտ պատրաստակամ է օգնելու ստեղծագործող մարդկանց եւ այստեղ միշտ լուսավոր տրամադրություն է»:

Նարեկացի արվեստի միության գործունեությունը իրականացվում է անվճար հիմունքներով եւ ազատ է անցկացվող բոլոր միջոցառումների մուտքը: Միությունը միշտ կանգնած է ստեղծագործող մարդկանց կողքին եւ ուժերի ներածին չափով աջակցում է:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Ես վերջակետ չեմ դնում»

*4-րդ էջից*

Նորարություն էր, որովհետեւ փոքր բեմում՝ երկու մետրը երկու մետրի վրա բեմադրելը ֆիլհարմոնիկ սրահում դժվար է, բայց դա լիարժեք ներկայացում էր: Առաջինն այնտեղ երգել է Իրինա Զաքյանը, չտեսնված անցավ. երկրորդը՝ Լեոնկավալոյի «Պայացներ» օպերան էր՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ Արամ Խաչատրյան սրահում, ֆիլհարմոնիկի ավելի ընդլայնված կազմով: Հետո Վերդի, «Ռիգոլետտո» բեմադրեցի արդեն օպերային թատրոնում, նույն տարին. երեք ամսվա մեջ ես երկու ներկայացում դրեցի: Եվ քանի որ Հայաստանում հաջողությունները չեն ներվում, իմ հաջողությունը նույնպես չներվեց, ու միանգամից փակվեց խոսակցությունը ներկայացումների շարունակման վերաբերյալ: Մեկ տարվա ընթացքում երեք ներկայացում ես տալիս այն դեպքում, երբ օպերային թատրոնը վեց տարվա մեջ մի ներկայացում չի տվել:

Գործ անելը քիչ է: Դու պետք է հասկանաս, որ գործ ունես պետական հսկա ապարատի հետ, կա նախարարություն, կա տնօրենություն, մի ապարատ, որի ամբիցիաները կարծես մի փոքր դու ոտնահարում ես: (Քանի որ) ավելի լավ, արագ եւ էժան ես անում...

Երբ իմանում են՝ ինչ գներով եմ արել, ծիծաղում են:

Չայկովսկու «Շչելկունչիկը» արեցի, որը նկարչությամբ է ուղեկցվում. երաժշտություն, խոսք, որը պատմում էր երեխաներին հեքիաթի մասին, եւ պատկերացրեք՝ ամբողջ էկրանով մեկ Սուքիասի նկարչությունն էր ցուցադրվում, կենդանի նկարչություն, ոչ թե տեսագրված: Ամեն նոր տարվա շեմին երկու-երեք ներկայացում անում ենք: ՀՀԿ-ն երկու տարի պատվիրում է մեկ ներկայացում, որ իրենք գան-նայեն, իրենց կանայք գան, իրենց երեխաները գան: Այսինքն՝ ամեն ինչ կորած չի, պարտադիր չէ, որ իրենք գան՝ առաջին դեմքերը, եթե իրենց երեխաները, կանայք գալիս են՝ նշանակում է ինչ -որ բան չի մեռնում:

**- Ի՞նչն է խնդիրն ուրեմն:**

- Մտքիս մեջ բոլոր ներկայացումները բեմադրել եմ, իրե՛նք խնդիր ունեն, իրե՛նք չեն տեսել իմ ներկայացումները: Պետք է գումար տրամադրեն, որ անեմ: Նախարար Հասմիկ Պողոսյանի մոտ էի, շատ լավ ընդունեց՝ էս տարի Վերդիի «Ռիգոլետտո» օպերան եմ անում , Վերդիի երկուհարյուրամյակն է, նոր ընթերցում է, նոր մեկնաբանություն է, եռաչափ՝ 3D գրաֆիկայի էլեմենտներ եմ օգտագործում: Այսինքն՝ նոր տեխնոլոգիաները մտցնում եմ դասական երաժշտության կոնցեպցիայի մեջ, եւ շատ հետաքրքրական է ստացվում: Գտնում եմ, որ որոշ օպերային ներկայացումներ կան, որոնցում կարելի է էքսպերիմենտներ անել, ժամանակակից սարքել, որովհետեւ նրանք ստեղծված են համամարդկային թեմաներով եւ այսօրվա հետ էլ համահունչ են: Բայց կան օպերաներ, որոնց հետ այդպես վարվել չի կարելի: «Ռիգոլետտոյի» հետ կապված հասել ենք նրան, որ գումարը պետք է գտնենք, նախապատրաստական բոլոր աշխատանքներն արել ենք, ընդամենը հիսուն հազար դոլարին համարժեք գումար է մեզ պետք: Յուրաքանչյուր օպերային ներկայացման ծախս սկսում է հարյուր հազարից: Եվ միլիոնների է հասնում: Երգելու է Հովհաննես Այվազյանը (հիմա Մարինյան թատրոնի գլխավոր դերակատարներից է, միեւնույն ժամանակ Կանադայում է երգում, իսկ ժամանակին ես եմ նրան տարել երգելու), որ բավականին ուրախացնող հաջողություններ ունի:

Հոկտեմբերի վերջին-նոյեմբերի սկզբին պատրաստ պետք է լինի:

Շատ մեծ դեր կատարեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար Էդվարդ Թոփչյանը: Հայաստանում երաժշտական արվեստը կա, գոյություն ունի՝ կարող եմ համարձակ ասել, եւ, ընդհանրապես՝ մենք ունենք հրաշալի երգիչներ, հրաշալի նկարիչներ, հրաշալի նվագավորներ, երգչախմբեր, պարարվեստի ներկայացուցիչներ, բայց չունենք թատրոն՝ օպերա, իսկ սա մառազմ է: Ունես լավ երգիչ, բայց չունես թիմ, մեզ մոտ որեւէ բան համակարգված չի, բավականին երկար ժամանակ օպերայում որեւէ ներկայացում չի գնացել-բեմադրվել: Մի «Սայաթ Նովա» գնաց նախանցած տարի, երեք տարի չարչարվելուց հետո: Այսօր ունենք «Սպարտակը» բեմադրված՝ շատ թանկ ներկայացում, եւ «Աիդան»: Ես չեմ քննարկում մեծ ծախսերով ներկայացումները, որ էս փոքր երկիրը հինգ-տասը տարին մեկ կարող է իրեն թույլ տալ: Արտերկրում շատ ֆիրմաներ կերազեին լինել օպերային թատրոնի հովանավորներ, դա հեղինակավոր, բարձր բան է համարվում:

**- Մտայնությունը հիվա՞նդ է մեզ մոտ: Մի երգիչ են կանչում, ֆոնոգրամայի տակ երգում է, հինգ հազար դոլար փող են տալիս...**

- Իմ ներկայացումը հինգ հազար դոլարով եմ արել:

Ինչը կփոխի՞ մտայնությունը: Օպերային արվեստի համար պետք է ունենաս մի հասարակություն, որի էլիտան ըստ որում կձգտի գնալ այնտեղ, ուրեմն եւ՝ հովանավորել: Այն մշակույթի մի սինթեզ է, որտեղ գումարվում են բոլոր արվեստները, ժողովրդի նկարագիրը այնտեղ երեւում է:

**- Խնդիր դնողները չկա՞ն:**

- Դնողները կան, մենք մեր ռեսուրսները չգիտենք, բացի դրանից՝ հասարակության, նրա էլիտայի նախասիրության խնդիր է: Ամեն ինչ հո նախագահը չպե՞տք է անի, ինչ-որ բան, հայեցակարգ պետք է պատրաստվի-տարվի, ասվի, գրվի:

**- Հանդիսատես կա՞: Վճարունակ:**

- Երեք-չորս հազար հոգի էսօր օպերայի սիրահարներ կան Հայաստանում: Օպերայի տոմսի գինը հազար դրամից մինչեւ հինգհազար դրամ է:Հիսունհազար դրամով ես գնացել եմ Իգլեսիասի համերգին, հասկանալի է, բիզնես է, բայց բաներ կան, որոնք բիզնես չպետք է լինեն: Որեւէ օպերային թատրոն ինքը դոտացիոն է:

Խնդիր պետք է դրվի: Ասենք՝ Սաակաշվիլին մի քանի օրենքներ ընդունեց. եթե երաժշտական դպրոց ես ավարտել՝ աշխատավարձդ բարձր է. մի քանի խնդիր միանգամից լուծեց այդպիսով՝ նախ երաժշտական դպրոցների պահանջարկը մեծացավ, բացի այդ՝ ոլորտը հովանավորվում է, նրանք տասնյակ ներկայացումներ են դրել:

Մեր օլիգարխների հետ, հարուստների հետ հանդիպել եմ: Բայց երբ նրանց հետ երգիծանկարչությունից ես խոսում՝ ասում են՝ «էդ որն ա՝ էն մուլտիկնե՞րը»: Բայց կան մեծահարուստներ, որ այնուամենայնիվ օպերա են գալիս լսելու եւ տեսնելու: Եթե իմանա հաստատ, որ նախագահականից մարդ է լինելու, հաստատ կգա: Հովիկ Աբրահամյանին եմ տեսել «Շչելկունչիկի» ժամանակ, գիտեմ, որ տիկին Ռիտա Սարգսյանն է հաճախ գալիս եւ սիրում է, օրինակ՝ «Մադամ Բատերֆլային» ինքն եկել էր եւ շատ հավանեց: Վարչապետն էլ էր եկել, չնայած կարծիք կա, որ ավելի ջազ է սիրում, կարծում եմ՝ լավ ներկայացմանը գալիս են: Կարդում են՝ Սուքիաս Թորոսյան՝ գալիս են (Վերջինը կատակով է ասում- Մ.Խ.):

Մշակույթի շատ ոլորտներում եմ զբաղված, հիմա դաս եմ տալիս ճարտարապետական համալսարանում՝ երգիծանք:

**- Բայց կարծես վերջին շրջանում գեղանկարչությունը հատուկ տեղ է գրավում քո կյանքում:**

- Ամեն տարի ցուցահանդես եմ անում՝ անցած տարի Հայոց այբուբենի տառերի շարքն էր, դրանից առաջ Թեքեյան կենտրոնում հոգեւոր թեմաներով ցուցահանդես ունեցա, այս տարի թեման Երեւանն է լինելու, ժամանակակից Երեւանը, ոչ թե հինը:Հինը քանդվել է, ուրախ հայացքով պետք է նայել նորին: Նոր Երեւանը երիտասարդությամբ լեցուն, ուրախացող, անվերջ հեռախոսող, խոսող քաղաք է, Հյուսիսային պողոտան, օպերան, Կարապի լիճը: Քառասունհինգ նկար կա արդեն մոտավորապես, ոճը ռեալիստական է՝ մի փոքր իմպրեսիոնիստական շնչով, մի քիչ էտյուդային տարբերակով: Այդ նկարներում միայն լավատեսություն է դրված: Տարվա տարբեր եղանակներն արտացոլված են, մի ձմեռային այգու նկար ունեմ՝ կարող է որեւէ քաղաքի այգի լինի, բայց ով տեսնում է, ասում է՝ ոնց որ Երեւանյան ձմեռ լինի: Մի խոսքով՝ կգաք, Երեւանը կտեսնեք: Հյուսիսային պողոտան երբ մարդկանցից դատարկ է լինում՝ ճնշող է, բայց մարդկանցով շատ սիրուն է, դեմքերով եւ ուրախությամբ, սիրուն աղջիկներով. մենք ենք սարքում Հյուսիսային պողոտան պողոտա: Հրապարակն էլ իր տաք ու ջերմ կողմերն ունի, հատկապես՝ երբ ֆանտաններն են երգում: Գիտեմ՝ քաղաքի ո՞ր մասում ովքեր են շրջում, որտեղ են ինտելեկտուալները, որտեղ՝ համեմատաբար վերջերս երեւանցի դարձածները:

Մեզ ստիպեցին, որ գեղանկարչությունը թախիծով ու մռայլությամբ լցնենք, նայում ես՝ դեպրեսիայի մեջ ես ընկնում, ես լավատեսական եւ ուրախ Երեւան եմ ներկայացնելու:

Զրուցեց ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

# Մարզական

## Չեխերը զգուշանում են Հայաստանի հավաքականից

***Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 6-ին Հայաստանի ազգային հավաքականը Պրահայում աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում ուժերը չափելու է Չեխիայի ընտրանու հետ: Մեր ֆուտբոլիստները սեպտեմբերի 2-ից Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտում սկսել են նախապատրաստվել կարեւորագույն այդ հանդիպմանը: Մրցակիցը եւս լրջորեն է պատրաստվում խաղին:***



Առաջիկա խաղի մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հետեւյալ կարծիքն է արտահայտել չեխերի գլխավոր մարզիչ **Միխալ Բիլեկը**. «Եթե ցանկանում ենք աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել, ապա պետք է հաղթենք խմբային մրցաշարի մնացած 3-4 հանդիպումներում: Դա նշանակում է, որ Մալթայի, Հայաստանի եւ Բուլղարիայի դեմ մրցավեճերում մենք պետք է խաղանք 3 միավորի համար: Վնասվածքների պատճառով հայերի հետ հանդիպմանը չեն մասնակցի Վլադիմիր Դարիդան, Թոմաշ Հյուբշմանը եւ Մաթեյ Վիդրան: Նրանք մեկնարկային կազմի ֆուտբոլիստներ են եւ նրանց կորուստը չի կարող չանդրադառնալ մեր հավաքականի խաղի վրա: Կփորձենք այլ տարբերակներ գտնել: Հայաստանն ուժեղ թիմ ունի: Պատահական չէ, որ հայերը Դանիային հաղթել են 4-0 հաշվով: Պետք է խոստովանենք, որ ներկայումս Հայաստանի հավաքականն ուժեղ է Չեխիայից»:

Առաջիկա խաղի մասին իր կարծիքն է հայտնել նաեւ Չեխիայի հավաքականի փորձառու դարպասապահ **Պետր Չեխը**. «Մենք բոլորս հասկանում ենք, որ Հայաստանի հավաքականի դեմ հանդիպումն ավելի կարեւոր է, քան Իտալիայի հետ խաղը: Մենք պետք է հաղթենք ՀՀ հավաքականին՝ հաջորդ փուլ մտնելու հնարավորությունից չզրկվելու համար: Մեզ չենք կարող երեք միավորի կորուստ թույլատրել: Թեեւ մարտին Երեւանում 3-0 հաշվով հաղթել ենք, սակայն այդ հանդիպումը բավականին դժվար ստացվեց մեզ համար: Հույս ունենք ավելի լավ խաղալ Պրահայում»:

Չեխիայի հավաքականի պաշտպան **Թոմաշ Սիվոկն** էլ հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Մարտին կայացած արտագնա խաղում մենք շատ էինք վախենում պարտվելուց, քանի որ մինչ այդ սեփական հարկի տակ զիջել էինք դանիացիներին: Այդ պատճառով փակեցինք խաղադաշտի կենտրոնը եւ կարողացանք հաղթել 3-0 հաշվով: Երկրպագուները մեզնից հաղթանակ են ակնկալում, սակայն ես չէի թերագնահատի հայերին: Ընտրական նախորդ մրցափուլում նրանք երկու անգամ հաղթել են սլովակներին, այս տարի պարտության են մատնել Դանիային, ինչպես նաեւ լավ հանդիպում են անցկացրել իտալացիների հետ:

Մենք ցանկանում ենք հարձակողական ոճի ֆուտբոլ ցուցադրել եւ գոլեր խփել, սակայն ՀՀ հավաքականի հետ բաց ֆուտբոլ խաղալն ինքնասպանություն է: Հայաստանի հավաքականը Եվրոպայի ամենաարագ թիմերից է, ուստի մենք պետք է մտածենք սեփական դարպասի պաշտպանության մասին»:

## Ըմբիշները նախապատրաստվում են աշխարհի առաջնությանը

### *Ռոման Ամոյանը կրկին հավաքականում է*



Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականը մեկնել է Բելառուսի Ստայկի մարզաբազա, որտեղ ուսումնամարզական վերջին հավաքը կանցկացնի՝ նախապատրաստվելով սեպտեմբերի 20-22-ը Բուդապեշտում կայանալիք աշխարհի առաջնությանը:

Մեր հավաքականն աշխարհի առաջնությունում հանդես կգա լրիվ կազմով՝ մեդալների համար պայքարելով քաշային բոլոր 7 կարգերում: Որոշ ընդմիջումից հետո կրկին հավաքականի կազմում է Եվրոպայի նախկին չեմպիոն Ռոման Ամոյանը, որը կմասնակցի մինչեւ 55 կգ քաշայինների մրցավեճին: Լեւոն Ջուլֆալակյանը հավաքականի կազմում ընդգրկել է նաեւ Ալեքսան Միքայելյանին (60 կգ), Սասուն Ղամբարյանին (66 կգ), Արսեն Ջուլֆալակյանին (74 կգ), Մաքսիմ Մանուկյանին (84 կգ), Արթուր Ալեքսանյանին (96 կգ) եւ Վաչիկ Եղիազարյանին (120 կգ): Հավաքականի կազմում Ստայկի են մեկնել նաեւ պահեստայիններ Արամ Ջուլֆալակյանը (66 կգ) եւ Արթուր Շահինյանը (84 կգ):

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականն ավելի վաղ էր մեկնել Ստայկի, քանի որ այս մրցաձեւի ներկայացուցիչներն արդեն սեպտեմբերի 16-ին սկսելու են մրցավեճն աշխարհի առաջնության պարգեւների համար: Ի տարբերություն հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի, ազատոճային մեր ըմբիշները հանդես կգան քաշային 6 կարգերում: Հայաստանը ներկայացուցիչ չի ունենա միայն գերծանրքաշային կարգում:

Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասարյանի գլխավորությամբ աշխարհի առաջնությանն են նախապատրաստվում Միհրան Ջաբուրյանը (55 կգ), Արթուր Առաքելյանը (60 կգ), Դավիթ Սաֆարյանը (66 կգ), Գրիգոր Գրիգորյանը (74 կգ), Մուսա Մուրթազալիեւը (84 կգ) եւ Էդգար Ենոքյանը (96 կգ):

**ԲՌՆՑՔԱՄԱՐՏ**

## Դարչինյան-Դոներ ռեւանշ-մենամարտը վերջապես կկայանա

**Վախթանգ Դարչինյանի եւ ֆիլիպինցի Նոնիտո Դոների միջեւ երկար սպասված ռեւանշ-մենամարտը վերջապես կկայանա: Այն նախատեսված է նոյեմբերի 9-ին ԱՄՆ-ում: Մենամարտը կհեռարձակվի ամերիկյան HBO հեռուստաալիքով:**

**Հիշեցնենք, որ 2 բռնցքամարտիկների առաջին մենամարտը կայացել էր 2007-ի հուլիսին: Այն ժամանակ ֆիլիպինցի բռնցքամարտիկը 5-րդ ռաունդում անսպասելիորեն նոկաուտի էր ենթարկել Դարչինյանին: Դա պրոֆեսիոնալ ռինգում հայ բռնցքամարտիկի առաջին պարտությունն էր: Այդ մենամարտից հետո Վախթանգը բազմիցս տարբեր առիթներով ռեւանշի է հրավիրել Դոներին, սակայն վերջինս մշտապես ինչ-որ պատճառաբանություն գտնելով, հրաժարվել էր կրկին ռինգ դուրս գալ Դարչինյանի դեմ:**

## Արոնյանը կմասնակցի Սենթ Լուիսի մրցաշարին

**Լեւոն Արոնյանն այս օրերին ընկերուհու հետ հանգստանում է Իտալիայում՝ միաժամանակ նախապատրաստվելով սեպտեմբերի 9-ին ամերիկյան Սենթ Լուիսում կայանալիք շախմատի մրցաշարին: 2 շրջանով անցկացվելիք մրցաշարում Արոնյանի մրցակիցները կլինեն նորվեգացի գրոսմայստեր Մագնուս Կառլսենը, ճապոնացի Հիկարու Նակամուրան եւ ԱՄՆ-ում բնակվող նախկին ռուսաստանցի Գատա Կամսկին:**

**Մրցաշարի հաղթողը կպարգեւատրվի 70 հազար դոլարով: 2-րդ տեղը զբաղեցրած շախմատիստը կստանա 50 հազար, 3-րդ եւ 4-րդ տեղերում հայտնվածները կպարգեւատրվեն համապատասխանաբար 30 եւ 20 հազար դոլարով:**

## Ուղեգրերի տերերը որոշվեցին

**Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանը եզրագիծը հատեց շախմատի Հայաստանի առաջին խմբի 74-րդ առաջնությունը, որում խաղարկվում էին բարձրագույն խմբի 3 ուղեգրերը: Դրանցից մեկը դեռեւս մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ նվաճել էր Կարեն Գրիգորյանը՝ 9,5 միավորով դառնալով առաջնության հաղթող: Նա ավարտական տուրում ազատ էր մրցումներից:**

**Մյուս 2 ուղեգրերը բաժին հասան 2-րդ եւ 3-րդ տեղերը գրաված Լեւոն Բաբուջյանին ու Տիգրան Քոթանջյանին: Բաբուջյանը 13-րդ տուրում հաղթելով Դավիթ Քալաշյանին, վաստակեց 8,5 միավոր: 7,5 միավորով առաջնությունն ավարտեց Տիգրան Քոթանջյանը, որն առավելության հասավ Մանուել Պետրոսյանի նկատմամբ: Տիգրանը շատ հաջող էր մեկնարկել ու գլխավորում էր աղյուսակը, սակայն առաջնության 2-րդ կեսում զիջեց դիրքերը ու ստիպված էր բավարարվել 3-րդ տեղով:**

**6,5-ական միավորով 4-րդ եւ 5-րդ տեղերը գրավեցին Հովհաննես Գաբուզյանն ու Տիգրան Հարությունյանը: Գաբուզյանը պարտվեց Վահե Բաղդասարյանին, Հարությունյանը հաղթեց Գրիգոր Դիլանյանին:**

**Ընդհանրապես 13-րդ տուրում հաջողությունն ուղեկցեց սպիտակներով խաղացող շախմատիստներին, որոնք 6 պարտիաներից 5-ում հաղթեցին: Իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին նաեւ Հայկ Վարդանյանն ու Արթուր Չիբուխչյանը, որոնք առավելության հասան համապատասխանաբար Հովիկ Հայրապետյանի եւ Արտավազդ Հայրապետյանի նկատմամբ:**

## Չեմպիոնական գոտին 2 կգ ոսկի է պարունակում




**Սեպտեմբերի 14-ին Լաս Վեգասում կայանալիք Մեյվեզեր-Ալվարես մենամարտի հաղթողը WBC-ից բացառիկ գոտի կստանա: Այն պատրաստել է մեքսիկացի արհեստավորը: Գոտին իտալական կաշվից է, որի վրա փորագրված են 2 բռնցքամարտիկների պատկերները: Գոտու ձեւավորման վրա 2 կգ ոսկի է ծախսվել:**

**Ամերիկացի բռնցքամարտիկ Ֆլոյդ Մեյվեզերը WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոնն է, որը պրոֆեսիոնալ ռինգում դեռեւս չի պարտվել: Նա շահել է բոլոր 44 մենամարտերը, որից 26-ը՝ նոկաուտով: Մեքսիկացի Սաուլ Ալվարեսը առաջին միջինքաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով չեմպիոնական գոտիների տեր է: Նա ընդամենը մեկ պարտություն է կրել՝ շահելով մնացած 42 մենամարտերը:**

**WBC-ի նախագահ Խոսե Սուլեյմանը հանրությանն է ներկայացրել բացառիկ գոտին: Նա նշել է, որ 2 բռնցքամարտիկների մենամարտը մեծ իրադարձություն կլինի, իսկ 2 կգ ոսկի պարունակող գոտին յուրահատուկ մրցանակ է այդ մենամարտի հաղթողի համար:**

## Ուշենինան եւ Յիֆանը կվիճարկեն շախմատային թագը

**Սեպտեմբերի 11-ին Չինաստանի Թայչժոու քաղաքում կմեկնարկի շախմատի աշխարհի չեմպիոնուհու տիտղոսի համար մրցախաղը: Շախմատային թագի ներկայիս տեր, ուկրաինուհի Աննա Ուշենինան 10 պարտիայից բաղկացած մրցախաղում կմրցի չինացի շախմատիստուհի Հոու Յիֆանի հետ: Հավասար արդյունքի դեպքում հաղթողը կորոշվի լրացուցիչ մրցախաղում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է նորարար ուսումնական միջավայրի ստեղծմանը





ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի դպրոցում բացվել է ժամանակակից կրթական միջավայրի բոլոր պահանջներին համապատասխանող դասասենյակ՝ ստեղծագործարան: Նորարարական լուծումներով դասասենյակի ստեղծումը հնարավոր է դարձել ՎիվաՍել-ՄՏՍ-ի, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի եւ Սարդարապատի դպրոցի համագործակցության շնորհիվ:

Այստեղ տեղադրվել է էլեկտրոնային գրատախտակ (smart board), ինչպես նաեւ 6 նոր համակարգիչ: Ստեղծագործարանը 30 աշակերտի համար նախատեսված լուսավոր մեծ սենյակ է, որտեղ հատուկ շարժական կահույքն աշակերտներին հնարավորություն է տալիս կատարելու ինչպես անհատական, այնպես էլ զույգերով կամ փոքր ու մեծ խմբերով աշխատանք: Նման միջավայրը հնարավոր է դարձնում բազմանպատակ գործունեությունը եւ տարբեր աշխատանքների համադրումը: Մասնավորապես՝ համակարգչի օգտագործմամբ եւ տեխնոլոգիայի կիրառմամբ դասապրոցեսի կազմակերպումը, քննարկումն ու դասախոսությունը, ընթերցանությունն ու խաղը:

«Երեխային տվեք հնարավորություն, եւ նա ինքը կբացահայտի իր ձիրքերը: Եթե մեզ հաջողվի կրթական միջավայրը դարձնել գրավիչ՝ արդյունքն իրեն սպասել չի տա: Մենք առաջնորդվում ենք այդ ուղղությամբ՝ վստահ լինելով, որ այսօր ներդրված ջանքերը չափազանց կարեւոր են լինելու վաղվա համար: Կրթության հանդեպ մեր ազգի յուրահատուկ վերաբերմունքը պետք է օգտագործել նպատակային եւ լավ հող նախապատրաստել հմուտ մասնագետներ ունենալու համար»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Այս տարի, ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը շահագործման կհանձնի եւս մեկ ստեղծագործարան՝ Արագածոտնի մարզի Արտենի համայնքում:

## ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ՏԻՐԱՊԵՏԵԼ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ

Հայաստանի ժուռնալիստների միության պատանի ժուռնալիստի դպրոցը /որը գործում է 1973 թվականից/ Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ հրավիրում է սովորելու հանրակրթական դպրոցների ժուռնալիստական հակում ունեցող բարձր դասարանցիների եւ վերջին տարիների շրջանավարտների:

Դասերը վարում են հանրապետության ԶԼՄ-ների լավագույն մասնագետները, Պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի անվանի դասախոսները: Դպրոցի սաները կարող են օգտվել ԵՊՀ-ի ուսումնական լաբորատորիայից, գրադարան-ընթերցասրահից, հանդես գալ ֆակուլտետի «Ժուռնալիստ» ուսումնական թերթում, journalist.am էլեկտրոնային պարբերականում, նախապատրաստվել ուսումնառությանը ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

Ուսման տեւողությունը՝ մեկ տարի:

Պարապմունքները կսկսվեն հոկտեմբերի 1-ից՝ յուրաքանչյուր երեքշաբթի, ժամը 15.30-ին, ժուռնալիստի տանը՝ Պուշկինի 3ա հասցեում եւ Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի մուլտի մեդիա լաբորատորիայում՝ յուրաքանչյուր ուրբաթ ժամը 16-ին:

Ուսուցումն անվճար է:

Ավարտողները կստանան վկայագիր:

Դիմել կարող են ամեն օր, ժամը 12.00-16.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, մինչեւ սեպտեմբերի 30-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 56-12-76, 56-14-47 հեռախոսահամարներով:

**ՀԺՄ պատանի ժուռնալիստի դպրոցի տնօրինություն**

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ԱՐԱՐԱՏ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

Բնակելի տուն, ընդ. մակերեսն է՝ 421.2 ք.մ, ջերմոցներ՝ 303 ք.մ եւ 446.2 ք.մ, պարիսպ՝ 13.2 ք.մ, 26.4 խ.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ 1-ին փողոց, 49 տուն: Լոտի մեկնարկային գինը՝ 31000000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 350000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին ( ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի փուլերը դասական եղանակով՝ 23.09.2013թ-ին ժ. 12:00-ին, եւ հաջորդող յուրաքանչյուր աշխատանքային օրերին նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Գավառի տարածքային սպառ կոոպ-ը հրավիրում է աճուրդ վաճառքի: Վաճառվում է

1. Նորատուսի համայնքի ունիվերսամի շենքը՝ 2,700,0 հազար ՀՀ դրամ մեկնարկային գնով:

2. Գանձակի տնտ. ապրանք. խանութը՝ 1,115,0 հազ. ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Աճուրդը կայանալու է հոլանդական եղանակով:

Աճուրդը տեղի կունենա 2013 թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 12.00 ՏՍԿ-ի վարչական շենքում:

Հասցեն՝ ք. Գավառ, Զ. Անդրանիկի 69 (Շրջկոոպ):

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 077-41-51-30 կամ 093-32-04-56 հեռախոսահամարներով:

***Վարչ. նախագահՎ. Գեւորգյան*** ***Աճուրդային հանձնաժողով***

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Աջափնյակ համ., Մարգարյան 1 նրբ., թիվ 1 շ., թիվ 36 հասցեում գտնվող 59.4 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13820000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համ., Բաշիկյան թիվ 42 հասցեում գտնվող 155.03 ք.մ. մակերեսով բնակելի տուն, ավտոտնակ՝ 38.1 ք.մ., կաթսայատուն՝ 5.9 ք.մ, սանհանգույց՝ 1.7 ք.մ., հողամաս՝ 0.0415 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 21900000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Կոտայքի մարզ, Պռոշյան համ., Կամոյի փող., 4-րդ շենք, թիվ 1 հասցեում գտնվող 294.5 ք.մ. մակերեսով բնակելի տուն, հոր՝ 20.4 ք.մ., հոր՝ 15.4 ք.մ., կիսակառույց շինություն՝ 22.5 ք.մ., կաթսայատուն՝ 7.8 ք.մ., պարիսպ՝ 2.4 ք.մ., հողամաս՝ 0.101 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 21640000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրառատ, 1-ին թաղամաս թիվ 8 հասցեում գտնվող 272.4 ք.մ. մակերեսով բնակելի տուն, մառան՝ 26.0 ք.մ., անասնաշենք՝ 12.7 ք.մ., հողամաս՝ 0.15 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 68060000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Ե. Չարենցի փող., թիվ 5 հասցեում գտնվող 334.4 ք.մ. մակերեսով բնակելի տուն, անասնաշենք՝ 48.8 ք.մ., սանհանգույց՝ 18.4 ք.մ., ծածկոց՝ 53.4 ք.մ., պարիսպ՝ 3.0 ք.մ., հողամաս՝ 0.2357 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 28320000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 20.09.2013թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 26.10.2013թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում 2470103078480000 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

## Վաճառվում է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 h., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

## Վաճառվում է

Առանձնատուն Էրեբունի թաղամասում, Ռոստովյան փողոց, տուն 48: Ընդ. մակերեսը՝ 132 քմ, բնակելի մակերեսը՝ 86 քմ: Ունի 2 ճակատ 15 մ եւ 9,5 մ: Հարմար է բիզնեսի կազմակերպման համար: Մշտ. ջուր, գազ, ջեռուցում: Վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային:

Հեռ. 094-333-009:

## Կորել է

Արաքսյա Արտաշեսի Գեւորգյանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետի դիպլոմը՝ տրված 1981 թ.-ին: Համարել անվավեր:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 4.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: